

Հայաստանի վերաբերյալ ռազմավարության նախագիծ

2019-2024

Հաստատվել է տնօրենների խորհրդի կողմից 2019թ. նոյեմբերի 27-ին

European Bank
for Reconstruction and Development

PUBLIC

ՎԶԵԲ-ը տրամադրում է փաստաթղթի բնօրինակ տեքստի թարգմանությունները միայն ընթերցողի հարմարության համար: Թեև ՎԶԵԲ-ը ողջամիտ միջոցներ է ձեռնարկել՝ ապահովելու թարգմանության իսկությունը,ՎԶԵԲ-ը չի երաշխավորում կամ հաստատում թարգմանության ճշգրտությունը: Ցանկացած նման թարգմանությանն ապավինելու արդյունքում ծագած ռիսկը կրում է միայն ընթերցողը: ՎԶԵԲ-ը, նրա աշխատակիցները կամ գործակալները որևէ հանգամանքներում ընթերցողի կամ որևէ մեկի առջև ոչ մի պատասխանատվություն չեն կրում թարգմանության անճշտության, սխալի, բացթողման, ջնջման, թերության և (կամ) թարգմանության բովանդակության որևէ փոփոխության կամ դրանցից բխող որևէ վնասի համար՝ անկախ պատճառներից:
Անգլերեն տարբերակի և թարգմանված տարբերակի միջև ցանկացած անհամապատասխանության կամ հակասության առկայության դեպքում գերակշռում է անգլերեն տարբերակը:

Բովանդակություն և տերմինների բառարան

European Bank
for Reconstruction and Development

Բովանդակություն

Ամփոփագիր 3

Հայաստան-ՎԶԵԲ համագործակցության ամփոփ նկարագիր 4

I. Նախորդ ռազմավարության իրականացումը (2015-2018) 5

Անցումային շրջանի հիմնական արդյունքները 5

Իրականացման ընթացքում մարտահրավերներն ու հիմնական կաղված դասերը 7

II. Տնտեսական համատեքստը 8

Մակրոտնտեսական համատեքստը և հեռանկարները 8

Անցումային շրջանի հիմնական մարտահրավերները 9

III. Կառավարության առաջնահերթությունները և շահագրգիռ կողմերի ներգրավումը 11

IV. ՎԶԵԲ-ի՝ Հայաստանի վերաբերյալ ռազմավարության աջնահերթությունների սահմանում 12

V. Միջոցառումների և արդյունքների շրջանակը 13

VI. ՎԶԵԲ-ի գործունեության ոլորտներում միջազգային գործընկերների փոխլրացման քարտեզագրում 15

VII. Իրականացման ռիսկերը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և սոցիալական հետևանքները

VIII. Դոնորների կողմից տրամադրված համաֆինանսավորման գնահատում 17

Հավելված 1 - Քաղաքական գնահատական 18

Հիմնական տերմինների բառարան

ԲՏՆ	Բիզնեսում տարեկան ներդրումներ
ՖԶԳ	Ֆրանսիայի զարգացման գործակալություն
ԽՓԲ	Խորհրդատվություն փոքր բիզնեսին
ԲՄԶԱՌԻ	Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների արդյունավետության ուսումնասիրություն
ԿԳՓ	Կառուցել-գործարկել-փոխանցել
ՍԱԶԲ	Սևծովյան առևտրի և զարգացման բանկ
ԳԻԵ	Գործառնությունների իրականացման երկիր
ՍԳՑ	Սպառողական գների ցուցիչ
ԿՍՊ	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ԷԱ	Էներգաարդյունավետություն
E5P	Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերություն
ԲԱԳ/ԲՌԳ	Շրջակա միջավայրիազդեցության գնահատում /Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանց
ԱՇԱԱ	Անցումային շրջանի վրա ակնկալվող ազդեցություն
ԵՄ	Եվրամիություն
ԲՍ	Բնապահպանական և սոցիալական
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՖՀ	Ֆինանսական հաստատություն
ԿՔԳՇ	«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր
ԿՏՖՇ	«Կանաչ» տնտեսության ֆինանսավորման ծրագիր
ԱԿՏ	Անցում դեպի կանաչ տնտեսություն
ՋԳ	Ջերմոցային գազ
ՀԱԵ	Համախառն ազգային եկամուտ
ՀՀ կառ.	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՀԱՇ	Համաշխարհային արժեքային շղթաներ
ԱԱ	Առողջություն և անվտանգություն
ԱԱԱ	Արդյունաբերություն, առևտուր և ագրոբիզնես
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն
ԵՇՆԳ	Ենթակառուցվածքային ծրագրերի նախապատրաստման գործիք
ՏԱ	Տեղական արժույթ
ԱՇ	Արտադրություն և ծառայություններ
ՄՓՄՁ	Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ
ՄՎՏ	Մեգավատ
ՈԲՖՀ	Ոչ բանկային ֆինանսական հաստատություն
ԱՄՄՆ	Ազգային մակարդակով սահմանված ներդրումներ
ՀՆՇ	Հարևանության ներդրումային ծրագիր
ՉՎ	Չաշխատող վարկեր
ՊԱԶՆ	Պաշտոնական աջակցություն զարգացման նպատակով
ՄՖՀ	Մասնավոր ֆինանսական հաստատություն
ԷԳՊ	Էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՄՀՄ	Մասնավոր հատվածի մասնակցություն
ՊԱԱԵՎ	Պորտֆելի ազդեցությունը անցումային շրջանիի վրա
ՌԿՄ	Ռիսկերը կիսելու մեխանիզմ
ԿԷՖՇ	Կայուն էներգայի ֆինանսավորման շրջանակ
ՊԲ	Պետական բանկ
ՊՁ	Պետական ձեռնարկություն
ՏՀ	Տեխնիկական համագործակցություն
ԱՖՇ	Առևտրի ֆինանսավորման ծրագիր
ԿԲ	Կանայք բիզնեսում

Ամփոփագիր

European Bank
for Reconstruction and Development

Հայաստանի հանձնառությունը Բանկի հիմնադրման մասին Համաձայնագրի 1-ին հոդվածում ամրագրված քաղաքական սկզբունքների նկատմամբ և նախորդ ռազմավարության ժամանակահատվածում դրանց կիրառումը Հայաստանի կողմից նշանավորվել է ժողովրդավարության, բազմակարծության և օրենքի գերակայության պահպանման վրա ավելի մեծ շեշտադրությամբ, մասնավորապես՝ 2018թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին կառավարության խաղաղ փոփոխությունից հետո: Նոր իշխանությունները պարտավորվել են խորքային փոփոխություններ կատարել և Հայաստանի արդիականացման գործընթաց իրականացնել: Քանի որ բարեփոխումների գործընթացը վաղ փուլում է, դեռ առկա են կարևոր մարտահրավերներ, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ:

Մտնելով անցումային փուլ սոցիալական և տնտեսական նշանակալի մարտահրավերների ներքո՝ Հայաստանը տպավորիչ քայլեր արեց տնտեսական աճի ուղու վրա, ինչը հնարավոր դարձավ կառուցվածքային բարեփոխումների շուտափույթ իրականացման շնորհիվ: Չնայած արագ կոնվերգենցիայի, Հայաստանի տնտեսության մեջ, այնուամենայնիվ, դեռ առկա են աճի և մասնավոր հատվածի զարգացման սահմանափակումներ: Հայաստանը շարունակում է մնալ դեպի ծով ելք չունեցող, վաղ անցումային շրջանում գտնվող երկիր՝ աշխարհագրական և քաղաքական սահմանափակումների իրավիճակում, ինչը սահմանափակում է նաև տարածաշրջանային ինտեգրումը և խոչընդոտում տնտեսության ճկունությանը, ընդ որում դեռ առկա են մարտահրավերներ անցումային այլ հարթությունների վրա: Անցումային բացերը հատկապես սուր են **մրցունակության** և **կառավարման** ոլորտներում (մրցակցության թերություններ և թույլ ինստիտուտներ), **ինտեգրման** գործընթացում (հարկաբյուջետային սահմանափակումներից բխող՝ թերի զարգացած ենթակառուցվածքները և անբավարար կապիտալ ներդրումները խոչընդոտում են ներքին և միջսահմանային առևտուրը) և **կանաչ** ոլորտում (ցածր էներգաարդյունավետություն և արտանետումների բարձր ցուցանիշներ):

Հիմնվելով բարեփոխումների առաջխաղացման և Երևանում նոր իշխանությունների կողմից տրամադրված՝ նորացված լեգիտիմության վրա, Բանկը կշարունակի իր ջանքերը՝ խթանելու Հայաստանի անցումը դեպի կայուն և լիարժեք շուկայական տնտեսություն՝ ներգրավվելով երկրի մասնավոր հատվածի և գործընկեր ֆինանսական հաստատությունների գործունեությանը, մաքսիմալ կերպով նպաստելով հմտությունների փոխանցմանը և Սփյուռքից ներհոսքերին և ուղղորդելու ընթացիկ բարեփոխումների ջանքերը կոռուպցիայի վերացման և բարեխիղճ կառավարման հետագա ամրապնդման ուղղությամբ: Հաշվի առնելով երկրում հարկաբյուջետային տարածքի զգալի սահմանափակումները, Բանկի ներգրավվածությունը պետական հատվածում կկենտրոնանա երկրի ենթակառուցվածքների բացը լրացնող, ֆինանսապես կենսունակ լուծումների, ինչպես նաև կանաչ տնտեսությանը նպաստող լուծումների վրա՝ հանածո վառելիքի ներկրումից երկրի կախվածությունը նվազեցնելու նպատակով:

Այս ամենը՝ զուգակցվելով դոնորների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության և համատեղ ներդրումային դրամաշնորհների հետ, որոնք կարող են համակցվել ՎԶԵԲ-ի կողմից առաջարկվող պրոդուկտին, կօգնի 2019-2024 թվականներին Հայաստանում իրականացնել հետևյալ ռազմավարական գերակա նպատակները.

- *Հզորեցնել մասնավոր հատվածի **մրցունակությունը**, բարելավել **կառավարումը** և աջակցել բիզնես միջավայրի բարեփոխումներին.*
- *Խթանել կայուն ենթակառուցվածքների զարգացումը՝ առևտրայնացման և դեպի **Կանաչ տնտեսություն** անցման միջոցով:*

Հայաստան-ՎԶԵԲ համագործակցության ամփոփ նկարագիր

European Bank for Reconstruction and Development

ՎԶԵԲ-ի ներդրումային գործունեությունը Հայաստանում [1]

Պորտֆել	€310մ	Գործող ծրագրեր	53
Մասնաբաժինը կապիտալում	24%	Գործառնական ակտիվներ	€236մ
Մասնավոր հատվածում մասնաբաժինը[1]	84%	Զուտ կուտակային ներդրումներ	€1,241մ

ԲՏՆ և գործառնություններ



Պորտֆելի բաղադրությունը



Պորտֆելի դինամիկան



Անցումային շրջանի բացերը [2]



Թվերը՝ Հայաստանի համատեքստում

	Հայաստան	Համեմատիչներ
Բնակչություն (մլն)[3] (2018)	3.0	*3 (Մոլդովա) 3.7 (Վրաստան)*
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (Գնողունակության պարիտետ, ԱՄՆ դոլար)[4] (2018)	10,176	*7,305 (Մոլդովա) 11,485 (Վրաստան)*
Համաշխարհային մրցունակության ցուցիչ (Համաշխարհային տնտեսական ֆորում) (2018)	70th Out of 140	*88th (Մոլդովա) 66th (Վրաստան)*
Գործազրկություն (%)[3] (2018)	16.3% (20.4%)	*3.0% (Մոլդովա) 12.7% (Վրաստան)*
Երիտասարդների շրջանում գործազրկություն (%, Աշխատանքի միջազգային կազմակերպության-ԱՄԿ-մոտավոր գնահատական)[5] (2018)	36.7%	*10.0% (Մոլդովա) 30.4% (Վրաստան)*
Կանանց մասնակցությունը (%, ԱՄԿ-մոտավոր գնահատական)[5] (2018)	49.6%	*38.9% (Մոլդովա) 57.8% (Վրաստան)*
Էներգատարություն.Առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարում-(TPES)/ՀՆԱ (տոննա նավթային համարժեք/հազար 2010 ԱՄՆ դոլար)[6] (2016)	0.26	*1.05 (Մոլդովա) 0.58 (Վրաստան)*
Արտանետումների ինտենսիվությունը, CO2/ՀՆԱ (կգCO2/ՀՆԱ 2010թ. -ին $)[6] (2016)	0.42	*0.45 (Մոլդովա) 0.26 (Վրաստան)*

[1] 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ. Բանկի կուտակային ներդրումները. 5 տարվա ճկուն գրաֆիկով արտոնյալ տոկոսներ [2] Տե՛ս. ՎԶԵԲ-ի՝ անցումային շրջանի վերաբերյալ զեկույց 2018-2019 թթ. :[3] Ազգային վիճակագրական մարմիններ, ըստ հին և նոր մեթոդաբանությունների:[4] ԱՄՀ Համաշխարհային տնտեսական հեռանկարներ (Ապրիլ 2019).[5] ՀԲ-Համաշխարհային զարգացման ցուցիչներ (WDI).[6] Էներգետիկայի միջազգային գործակալություն (ԷՄԳ)

PUBLIC

1. Նախորդ ռազմավարության իրականացումը (2015-2018)

1.1. Նախորդ ռազմավարության շրջանակներում ձեռք բերված հիմնական անցումային արդյունքները

European Bank for Reconstruction and Development

Ռազմավարությունների համապատասխանեցում

Կուտակային ներդրումներ (2015-2018)



ԱԿՏ մասնաբաժինը՝ 23%

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհներ



Անցումային շրջանի վրա ազդեցության արդյունավետությունը *



Առաջնահերթություն 1. Մասնավոր հատվածի մրցունակության հզորացում՝ կարողությունների ամրապնդման, թափանցիկության բարձրացման և բիզնես միջավայրի բարելավման միջոցով

Անցումային շրջանի հիմնական արդյունքները

- Տրամադրվել է **ուղղակի և անուղղակի ֆինանսավորում, ինչպես նաև խորհրդատվական օժանդակություն տեղական ՍՓՄՁ-ներին՝** գործառնական ստանդարտների և մրցունակության (օրինակ՝ կառավարման արդյունավետության), մարզերի զարգացման, գենդերային հավասարության և ներառականության բարելավման նպատակով:
  - **ՍՓՄՁ-ների համար առավել հասանելի է դարձել արտաքին ֆինանսավորումը.** տրամադրվել է ավելի քան €250մլն ՍՓՄՁ-ների վարկային գծերի տեսքով, որոնք հատկացվել են ֆինանսական միջնորդների միջոցով (այդ թվում՝ €55մլն կանանց կողմից ղեկավարվող ընկերություններին):
  - **ԽՓԲ հաճախորդների համար կատարողականության բարելավված չափանիշներ՝** օգտագործվել է 1,8 մլն եվրո դոնորային ֆինանսավորում 334 խորհրդատվական ծրագրերի համար (այդ թվում՝ 16 միջազգային ծրագիր)՝ ԱՀ ոլորտում գործող փոքր ձեռնարկությունների համար (սնունդ և խմիչքի արտադրություններ, մեծածախ և մանրածախ առևտուր):
  - 2015թ.-ին մեկնարկած «Կանայք բիզնեսում» (ԿԲ) ծրագրի շրջանակներում **հատուկ դասընթացներ և մենթորություն է տրամադրվել ավելի քան 81 կին ձեռներեցների**, ինչը հանգեցրել է 56% աճի շրջանառության, և 52% աճի զբաղվածության ոլորտներում:
- Աջակցել ենք ՎԶԵԲ-ի կողմից ղեկավարվող Բիզնեսի աջակցման գրասենյակի կողմից որդեգրված՝ **բիզնես միջավայրի բարելավման ու բարեփոխումների** օրակարգին՝ կենտրոնանալով հարկերի պարզեցման, մաքսային և բիզնեսի գրանցման ընթացակարգերի և ՓՄՁ քաղաքականության վրա:
- Օժանդակել ենք կայուն տեղական կորպորացիաներին տրամադրվող **ֆինանսական միջնորդության ուժեղացման** հարցում՝ ընդլայնելով ՄՖՀ-ների ներգրավվածությունը, այդ թվում այն ՄՖՀ-ների, որոնց կապիտալում Բանկն ունի բաժնային բաժնետոմսեր և խթանելով **ոչ բանկային ֆինանսական այլընտրանքները**:
  - Կնքվել է ՖՀ-ների հետ կապված 64 գործարք, այդ թվում՝ 32 ԱՖԾ և 7 ԿԲ վարկային գծեր, ինչպես նաև 16,4 միլիոն եվրոյի չափով էներգաարդյունավետության վարկեր, որոնք հատկացվել են ՄՖՀ-ների կողմից:
  - Ապահովել ենք Եվրամիության կողմից տրամադրվող 15 միլիոն եվրո գումարի չափով դրամաշնորհներ՝ Հայաստանի ՓՄՁ-ների ֆինանսավորման և խորհրդատվության գործիքի (ՖԽԳ) ստեղծման համար, ներառյալ ԽՓԲ-ն և միայն ՀՀ-ի՝ Մասնավոր կապիտալում ներդրումների հիմնադրամը:

Խորհրդատվություն փոքր բիզնեսին



* *Անցումային ազդեցության կատարողականը արտացոլում է, թե որքանով է հավանական, որ ծրագրերը կհասնեն ստորագրման ժամանակ դրանցից ակնկալվող ազդեցությանը անցումային շրջանի վրա: Հաշվարկված է գործող հասուն պորտֆելի (> 2 տարի) հիման վրա:*

PUBLIC

1. Նախորդ ռազմավարության իրականացումը (2015-2018)

1.1 Նախորդ ռազմավարության շրջանակներում ձեռք բերված հիմնական անցումային արդյունքները.

European Bank for Reconstruction and Development

Առաջնահերթություն 2. Կապիտալի շուկաների զարգացում և տեղական արժույթով ֆինանսավորման խթանում

Անցումային շրջանի հիմնական արդյունքները

- 2015-2018 թվականների ժամանակահատվածում տեղական բանկերին և միկրոֆինանսական հաստատություններին տեղական արժույթով 69,5 միլիոն եվրո գումարի չափով վարկեր են տրամադրվել 25 ՏԱ գործարքի միջոցով:
- Օժանդակություն է ցուցաբերվել տեղական կապիտալի շուկաների հզորացման և զարգացման ուղղությամբ:
  - Արդյունավետ համագործակցություն է տեղի ունեցել Կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության հետ՝ կազմվել է ՓՀՇ, ինչպես նաև **Տեղական արժույթի և կապիտալի շուկայի զարգացման** գործողությունների պլան, որը կենտրոնանում է չորս հիմնասյուների վրա. i) ճանապարհային քարտեզ Հայաստանի փողի շուկայի զարգացման համար, ii) կորպորատիվ պարտատոմսերի շուկա, iii) շուկայի ենթակառուցվածք և iv) վերապատրաստում և կարողությունների զարգացում:
  - Իրականացվել են ՏՀ ծրագրեր, որոնք վերաբերում են **դրամավարկային քաղաքականությանն ու տեղական կապիտալի շուկաներին**, օրինակ գնահատի թիրախավորում և հաղորդակցություն, արժեթղթերի շուկա և ֆինանսական ածանցյալներ, Փողի շուկայի սխտորոշիչ շրջանակ:
  - Ձևավորվել է Փողի շուկայի աշխատանքային խումբ (ՓՇԱԽ), որը մի հարթակ է՝ մասնակիցների հետ քննարկելու շուկաներում զարգացումները և կատալիզացնելու հայաստանյան փողի շուկաների հետագա առաջընթացը:
- Հաջողությամբ կատարվել է առաջին ռեպո գործարքը տեղական բանկի հետ՝ Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի ներքո):

Տեղական արժույթի և կապիտալի շուկաներ



Առաջնահերթություն 3. Կայուն և առևտրայնացված հանրային կոմունալ ծառայությունների զարգացում

Անցումային շրջանի հիմնական արդյունքները

- Աջակցություն է ցուցաբերվել **հանրային կոմունալ ծառայությունների գործառնական և ֆինանսական արդյունավետության բարելավման** ուղղությամբ, ջանքեր են գործադրվել նպաստելու պետական-մասնավոր համագործակցության վերաբերյալ երկխոսությանը՝ ենթակառուցվածքների զարգացման համատեքստում:
  - Օժանդակություն է ցուցաբերվել ծախսերն արտացոլող **սակագնային բարեփոխումը** կոմունալ ոլորտում ներդնելու հարցում, օրինակ՝ Վեոլիայի հետ (ջրի մատակարարման և ջրահեռացման օպերատոր) վարձակալության պայմանագիրը, որն ուժի մեջ է 2017-ի հունվարի 1-ից:
  - Իշխանությունների հետ համագործակցություն է եղել **ՊՄԳ նոր օրենքի և կարգավորող դաշտի** վերաբերյալ (սպասվում է նոր կառավարության կողմից հաստատումը), որին զուգահեռ անցկացվել է ՏՀ ոլորտային գնահատում ենթա-սուվերեն վարկավորման հետ կապված իրավական և հարկաբյուջետային բարեփոխումների վերաբերյալ:
- Շոշափելի արդյունքներ են գրանցվել **կայուն քաղաքային պլանավորման քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների** ամրապնդման ուղղությամբ:
  - 2017 թվականին ընդունվել է **«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը** (ԿՔԳԾ), ներառյալ Երևանի 5-ամյա զարգացման ծրագրում ներառված գործողությունները՝ հիմք հարթելով ենթակառուցվածքներում ԱԿՏ-ի հետ կապված ներդրումների համար:
  - 2018-ին մշակվել է երկրորդ **ԿՔԳԾ-ն՝ Գյումրի քաղաքի համար,** 2016 թ.-ին EBRD-ի ներքո իրականացվող՝ փողոցային արդյունավետ լուսավորության և փողոցների վերակառուցման՝ 14,6 միլիոն եվրո սուվերեն ծրագրից հետո:
  - Կոտայքի և Գեղարքունիքի **կոշտ թափոնների կառավարման** ծրագրին 5,5 միլիոն եվրո գումարի չափով վարկ է տրամադրվել երկրում առաջին ԵՄ-ի չափանիշներին համապատասխանող կոշտ թափոնների աղբավայրը կառուցելու համար:
- Ներգրավվածություն է եղել **Հայաստանի էներգետիկական ցանցերի** (ՀԷՑ) բազմամյա պլանավորմանը, ինչպես նաև կոմունալ մաշտաբի արևային և հողմային էներգիայի ծրագրերի համաֆինանսավորման և բարձրավոլտ ենթակառուցվածքի վերակառուցման վերաբերյալ երկխոսությանը:
- Աջակցություն է ցուցաբերվել **պատասխանատու հանքարդյունաբերության ոլորտին՝** Լիդիան Ինթերնեշնլի **սեփական կապիտալում ներդրումների միջոցով**: 2017 թվականին Հայաստանը միացել է Արդյունահանող արդյունաբերությունների թափանցիկության նախաձեռնությանը (ԱԱԹՆ՝ պարտավորություն ստանձնելով բարելավել հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկությունը:

Անցում դեպի կանաչ տնտեսություն



1. Նախորդ ռազմավարության իրականացումը (2015-2018)

1.2. Իրականացման ընթացքում մարտահրավերներն ու հիմնական կաղված դասերը

European Bank
for Reconstruction and Development

Իրականացման համատեքստը

Հայաստանը Վաղ անցումային շրջանում գտնվող երկիր է՝ սահմանափակող աշխարհաքաղաքական իրավիճակում, որը սահմանափակում է նաև ինտեգրումը և խոչընդոտում տնտեսության ճկունությանը, անցումային այլ ոլորտներում նույնպես դեռևս կան կարևոր մարտահրավերներ: Նախորդ ռազմավարության ժամանակահատվածում (2015-2018) Հայաստանի տնտեսությունը շարունակել է աճել և 2018-ին գրանցել է ՀՆԱ-ի 5,2% աճ, քանի որ 2018 թվականի մայիսին տեղի ունեցած խաղաղ հեղափոխության տնտեսական ազդեցությունը սահմանափակ էր: Ակնկալվում է, որ նոր իշխանությունների նախաձեռնած՝ կառավարման բարեփոխումները նույնպես արդյունավետ կլինեն: Բանկը հանդիսացել է որպես առաջատար ներդրող՝ ապահովելով Անցումային շրջանի վրա շատ լավ ազդեցություն, հիմնականում մասնավոր հատվածում: Բիզնեսի ծավալը նահանջել է 2015 թ.-ի պատմական թռիչքի համեմատ՝ արտացոլելով թանկարժեք իրերի պակասը և տնտեսության փոքր ծավալը, ինչը պայմանավորված է հիմնականում տրանսֆերտների հաշվին սպառմամբ, պատմականորեն բարդ բիզնես միջավայրով և սահմանափակ հարկաբյուջետային դաշտով:

Իրականացման ընթացքում մարտահրավերները

- 2018 թվականի մայիսյան Թավշյա հեղափոխությունից առաջ և հետո ժամանակավոր քաղաքական և ինստիտուցիոնալ անորոշություն:
- Տնտեսության մենաշնորհային կառուցվածքը, այդ թվում՝ քաղաքական և գործարար ոլորտների փոխադարձ կախվածությունը ճնշում են մրցակցությունը:
- Կորպորատիվ ներդրումների ցածր մակարդակներ և պատմականորեն բարդ բիզնես միջավայր, ինչը խոչընդոտում է Օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ):
- Տեղական կապիտալի շուկաները թերզարգացած են:
- Հարկաբյուջետային դաշտի խիստ սահմանափակումները և վարչարարական կարողությունների բացերը սահմանափակում են հանրային ենթակառուցվածքների զարգացման ու ՊՄԳ-ների և ՊՁ-ների առևտրայնացման հեռանկարները:
- Անկայուն տարածաշրջանային աշխարհաքաղաքական միջավայրը և Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հակամարտությունը բացասաբար են անդրադառնում միջսահմանային ինտեգրման վրա:

Հիմնական կաղված դասերը և հաջորդ քայլերը

- Օգտագործել հնարավորությունները՝ ավելի սերտորեն համագործակցելու նոր, բարեփոխումների ուղին բռնած կառավարության հետ:
- Նպաստել երկրում ապամենաշնորհմանը, գործարար միջավայրի և կառավարման բարելավմանը հանրապետության և կորպորատիվ մակարդակներում:
- Ներգրավել սփյուռքի հայ ներդրողներին տարբեր ոլորտներում (օրինակ՝ կորպորատիվ ոլորտ, զբոսաշրջություն)՝ խթանելու ՕՈՒՆ-երը:
- Շարունակել աշխատանքը կապիտալի շուկայի զարգացման և տեղական արժույթի ֆինանսավորման ուղղությամբ, հնարավորություններ փնտրել՝ օժանդակելու բանկային ոլորտի համախմբմանը և ընդլայնելու ֆինանսական ոլորտի շրջանակները:
- Հետամուտ լինել պրոակտիվ մոտեցմանը՝ հանրային կոմունալ ծառայությունների ոլորտում առևտրայնացմանն ու արդյունավետության բարձրացմանը նպաստելու նպատակով:

2. Տնտեսական համատեքստը

2.1 . *Մակրոտնտեսական համատեքստը և ռազմավարության ժամանակահատվածի հեռանկարները*

European Bank
for Reconstruction and Development

Հայաստան. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

	2015	2016	2017	2018
ՀՆԱ-ի աճ (% տարեցտարի)	3.2	0.2	7.5	5.2
CPI՝ սպառողական գների ցուցիչի աղաճ (% միջին)	3.7	-1.4	1.0	2.5
Կառավարության հաշվեկշիռ (% ՀՆԱ)	-4.8	-5.5	-4.8	-1.6
Ընթացիկ հաշվի մնացորդ (% ՀՆԱ)	-2.7	-2.1	-3.0	-9.4
Զուտ ՕՈՒՆ (ՀՆԱ-ի %)	-1.5	-2.5	-1.9	-2.0
Արտաքին պարտք (% ՀՆԱ)	84.5	94.4	91.3	87.8
Համախառն պահուստներ (% ՀՆԱ)	16.8	20.9	20.0	18.1
Ընդհանուր պետական պարտք (% ՀՆԱ)	43.6	51.5	53.5	51.3
Գործազրկություն (% բնակչ.)	18.5	18.0	17.8	20.4
Անվանական (նոմինալ) ՀՆԱ ($բլն)	10.6	10.5	11.5	12.4

- **Մտնելով անցումային շրջան որպես տարածաշրջանի ամենաաղքատ երկրներից մեկը, Հայաստանը բռնեց տպավորիչ տնտեսական աճի ուղին, ինչը հնարավոր դարձավ կառուցվածքային բարեփոխումների շուտափույթ իրականացման շնորհիվ:** Անկախության ձեռքբերումից ի վեր, Հայաստանի իրական ՀՆԱ-ն և եկամուտները մոտավորապես քառապատկվել են՝ սա եկամուտների ամենաուժեղ կոնվերգենցիան է ԱՊՀ երկրներում և ավելի լայն շրջանակում: Այնուամենայնիվ, նշված տարիների ընթացքում ցածր սկզբնակետի և անհավասար անցումային փուլի պատճառով, Հայաստանը դեռ ունի կոնվերգենցիայի բացեր՝ կյանքի մակարդակի առումով: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2018-ին կազմել է 4. 188 դոլար:
- **Բարդ մարտահրավերների ներքո, նոր կառավարությունը սկսել է բարեփոխումների հավակնոտ ծրագիրը:** Հիմնվելով բարձր լեգիտիմության և ժողովրդի կողմից հզոր աջակցության վրա՝ իշխանությունները վճռական քայլեր ձեռնարկեցին՝ կատարելու հայտարարված խոստումը և արմատախիլ անելու կոռուպցիան, նվազեցնելու ստվերային տնտեսության չափն ու հարկերի վճարումից խուսափելու ծավալը և պայքարելու մենաշնորհների դեմ: Այնուամենայնիվ, մարտահրավերները դեռ առկա են: Կառավարման և մրցակցության ոլորտներում բացերը թուլացնում են բիզնես միջավայրը: Ներքին փոխկապակցվածությանն ու միջսահմանային ինտեգրմանը խոչընդոտում է թերզարգացած ենթակառուցվածքը, մինչդեռ գոյություն ունեցող և նոր աճը խթանող, կապիտալ ներդրումների նախաձեռնումը տուժում է սահմանափակ հարկաբյուջետային դաշտի պատճառով:
- **Տնտեսությունն աճում է արագ տեմպերով:** 2016-ին գրեթե լճացումից հետո ՀՆԱ-ի աճը կտրուկ վերականգնվել էր՝ 2017-ին հասնելով 7,5%-ի, իսկ 2018-ին 5.2%-ի: Արդյունքների ընդլայնումը պայմանավորված էր մասնավոր սպառման աճով տրանսֆերտների վերականգնման ֆոնին, ինչպես նաև արտահանման աճով: Այս ժամանակահատվածում աճ էր արձանագրվել նաև կապիտալ ներդրումների ոլորտում: Տնտեսական գործունեության ցուցանիշը նշանակում է, որ 2019 թվականի առաջին կիսամյակում շարունակվելու է հզոր ընդլայնում: Մակրոտնտեսական միջավայրը, ընդհանուր առմամբ, մնալու է առողջ: Չնայած 2018 թվականին ընթացիկ հաշվի դեֆիցիտի մեծացմանը դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ մնաց համեմատաբար կայուն: Հավախառն միջազգային պահուստները 2019 թվականի հուլիսին կազմել են 2,2 միլիարդ ԱՄՆ դոլար՝ ապահովելով ներմուծման ծածկույթի մոտավորապես 4 ամիսը: Ֆիսկալ քաղաքականության ճկունությունն ու հակադարձ ցիկլիկությունը և պետական ծախսերի օպտիմալ կառուցվածքը ապահովելու համար Հայաստանի իշխանությունները որդեգրել են հարկաբյուջետային նոր կանոններ և կանգնել հարկաբյուջետային համախմբման ուղու վրա: Կանխատեսվում է, որ Հայաստանի տնտեսությունը կպահպանի աճի ուժեղ թափը՝ իրական ՀՆԱ-ի աճի ցուցանիշը կհասնի 4,5% 2019 և 2020 թվականներին (ՎԶԵԲ՝ տարածաշրջանային տնտեսական հեռանկարներ, 2019 թվականի մայիս):.
- **ԱՄՀ-ի նոր ծրագիրը աջակցում է** Կառավարության՝ **բարեփոխումների ջանքերին:** Նախաձեռնվելով 2019թ.-ի մայիսին, եռամյա կանխարգելիչ «Սթենդ-Բայ» վարկային պայմանավորվածությունը (SBA) նպատակ ունի պահպանել մակրոտնտեսական կայունությունը՝ միաժամանակ նպաստելով ավելի բարձր և ավելի ներառական աճին:

Աղբյուրները. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, ՀՀ կենտրոնական բանկ, ֆինանսների նախարարություն:

PUBLIC

2. Տնտեսական համատեքստը

European Bank
for Reconstruction and Development

2.2. Անցումային շրջանի հիմնական մարտահրավերները[1]

Մրցունակ (4.51)

- Չնայած բարելավումներին, գործարար միջավայրում դեռ առկա են թույլ կողմեր:
- Մրցակցությունն ավանդաբար կաշկանդված է մենաշնորհային և օլիգոպոլիստական շուկայական կառուցվածքով, ինչպես նաև այս ոլորտում առկա՝ կարգավորող և հարկադիր կատարման սահմանափակումներով:
- Աշխատուժի արտադրողականությունը ՎԶԵԲ-ի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից սահմանված միջին մակարդակից ցածր է. ռեսուրսները արգելափակվում են ցածր արտադրողականություն ունեցող գործունեության ներքո, իսկ ապրանքների արտահանման զամբյուղում գերակշռում է ցածր հավելյալ արժեք ունեցող արտադրանքը:
- Ենթակառուցվածքային խոչընդոտները ազդում են արտաքին մրցունակության վրա:
- Առկա են դժվարություններ Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) միջազգային չափանիշներին և լավագույն գործելակերպին համապատասխանելու առումով:
- ՓՄՁ-ները մարտահրավերների են դիմագրավում ֆինանսավորման հասանելիության և համապատասխան բիզնես հմտությունների և չափորոշիչների առկայության հարցերում:
- Նորարարությունների թույլ էկոհամակարգը և բարձրորակ հմտություններ ունեցող աշխատուժի պակասը սահմանափակում են նորարարությունը:
- Արտագաղթը քայքայում է մարդկային կապիտալը:

Լավ կառավարվող (5.81)

- Կարգավորողի բեռը որոշ ոլորտներում շարունակում է մնալ ծանր և խճճված. պետական կառավարման բարեփոխումները պետք է շարունակվեն:
- Հարկային բազայի ընդլայնման և հարկերի հավաքագրման մակարդակի բարձրացման սկզբնական հաջողությունները պետք է ամրապնդվեն պարզ և արդար հարկային օրենսգրքի և արդյունավետ ու թափանցիկ հարկային վարչարարության առկայությամբ:
- Թույլ ինստիտուտները և ոչ պաշտոնական կապերի զգալի մակարդակը նպաստում են մասնավոր հատվածի համար անհավասար խաղային դաշտի ստեղծմանը:
- Կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ ջանքերը պետք է շարունակվեն և ինստիտուցիոնալացվեն այնպես, որ դա բացասաբար չանդրադառնա մասնավոր հատվածի կանոնավոր գործունեության վրա:
- Անհրաժեշտ է անդրադառնալ դատական համակարգի թույլ կողմերին և ամրապնդել օրենքի գերակայությունը:
- Անվճարունակության բանաձևի շրջանակը բարելավելու ուղղությամբ ջանքերը պետք է առաջ ընթանան:
- Կորպորատիվ կառավարման ստանդարտները թույլ են և խստորեն չեն կիրառվում:

Կանաչ (5.76)

- Էներգատարության և արտանետումների մակարդակը ԵՄ-ի երկրների միջին մակարդակից բարձր է:
- Էներգաարդյունավետությունը բնակելի շենքերում թերի է, դրանք զգալիորեն ավելի շատ էներգիա են սպառում ԵՄ-ի բնակելի շենքերի համեմատ:
- Էներգաարդյունավետության կանոնակարգերի կիրարկումը մարտահրավեր է:
- Էներգետիկ ենթակառուցվածքները պետք է արդիականացվեն, այդ թվում՝ էլեկտրաէներգիա արտադրող օբյեկտները:
- Էներգաարդյունավետության և ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցներ ձեռնարկող ՓՄՁ-ները տեխնիկական կամ ֆինանսական աջակցության կարիք ունեն:
- Պետք է ընդունվի հստակ նպատակակետեր ունեցող ընդհանուր ճանապարհային քարտեզ վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի մեծացման նպատակով:
- Առկա է խոցելիություն կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ:

Ապրանքների արտահանման կառուցվածքը, Ընդհանուր մասնաբաժին 2018 թ.



Աղբյուրները. ՄԱԿ-ի՝ Առևտրի և զարգացման խորհրդաժողով (UNCTAD), ՎԶԵԲ-ի հաշվարկներ

Կառավարման համաշխարհային ցուցիչներ 2017-ին



Աղբյուրը. ՀԲ, Կառավարման Համաշխարհային ցուցանիշներ (WGI), ՎԶԵԲ-ի հաշվարկներ

Էներգատարության և արտանետումների մակարդակները *2016թ.-ին*



Աղբյուրը. Էներգետիկայի միջազգային գործակալություն

PUBLIC

1. Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս ՎԶԵԲ-ի Դիանոստիկա ըստ երկրների: Պայմանական անցումային միավորները չափվում են 1-10 մասշտաբով, որտեղ 10-ը ներկայացնում է սահմանը՝ ենթակա է փոփոխության, երբ մեթոդաբանությունը վերջնականացվի:

2. Տնտեսական համատեքստը

2.2. Անցումային շրջանի հիմնական մարտահրավերները

European Bank
for Reconstruction and Development

Ներառական (5.95)

- Կանանց շրջանում աշխատուժի ցուցանիշը տղամարդկանց աշխատուժի ցուցանիշից ցածր է, ֆինանսավորման հասանելիությունը սահմանափակ, կանանց մասնակցությունը բիզնեսի սեփականատիրությանը ցածր է, երեխաների խնամքի ծառայությունները թերի են, սեռով պայմանավորված աշխատավարձերի տարբերությունը դեռ զգալի է, թեև նվազում է:
- Հայաստանում կրթություն ստացողների քանակն աճում է, սակայն առկա է հմտությունների անհամապատասխանություն ոլորտների պահանջներին, իսկ աշխատատեղերում վերապատրաստման որակը բարելավման կարիք ունի:
- Մեծ է երիտասարդության շրջանում գործազրկության մասնաբաժինը, ինչպես նաև ոչ կրթություն և ոչ էլ զբաղվածություն ունեցող երիտասարդների մասնաբաժինը:
- Բիզնես ծառայությունների սահմանափակ հասանելիությունը, ենթակառուցվածքների և տրանսպորտային միացումների ցածր որակը և երկու անմիջական հարևանների հետ առևտրի և տրանսպորտային կապերի բացակայությունը նպաստում են տարածաշրջանային ներառականության առումով մարտահրավերներին:
- Երիտասարդների, ինչպես նաև Երևանի սահմաններից դուրս ապրող մարդկանց համար աշխատանք գտնելու սահմանափակ հնարավորությունները նպաստում են արտագաղթին:

Ճկուն (6.08)

- Համեմատաբար մասնատված բանկային ոլորտ՝ հետագա համախմբման հավանական անհրաժեշտությամբ՝ արդյունավետությունն ու եկամտաբերությունը բարելավելու նպատակով:
- Փոխառությունների ներթափանցումը ցածր է՝ ավելի զարգացած երկրների համեմատ:
- Հաշվեկշիռների դոլարիզացիայի ցուցանիշը բարձր է, ինչը բանկերին ենթարկում է պոտենցիալ ռիսկերի:
- Ակտիվների որակը զգայուն է արտարժույթի հետ կապված ռիսկերի նկատմամբ:
- Ոչ բանկային հատվածը փոքր է, կապիտալի շուկաները թերի են զարգացած:
- Մեծ է կախվածությունը չդիվերսիֆիկացված աղբյուրներից ներմուծվող գազից:
- Էներգետիկ ոլորտում կառավարումը և խթանման մեխանիզմները կարևոր են ներդրումների խրախուսման համար, այդ թվում՝ մեծ ներուժ ունեցող արևային էներգիայի ոլորտում:

Ինտեգրված (5.98)

- Կախվածություն Վրաստանից՝ ամենամեծ արտաքին շուկաներ մուտք գործելու համար:
- Կարիք կա նվազեցնելու առևտրի արժեքը:
- ՕՈՒՆ-ների պաշարն ու մուտքերը փոքրածավալ են, ՕՈՒՆ-ների հոսքերը տարածաշրջանի և ՎԶԵԲ-ի գործունեության երկրների միջին ցուցանիշից ցածր են:
- Տրանսպորտային ենթակառուցվածքների և նյութատեխնիկական ապահովման պակաս և ցածր որակ, ճանապարհային անվտանգությունը առանձնահատուկ խնդիր է:
- Սահմանափակ հարկաբյուջետային տարածքը և պետական կառավարման սահմանափակ կարողությունները ազդում են առկա և նոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման վրա:
- Քաղաքային ենթակառուցվածքները, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը և կոշտ թափոնների կառավարման ոլորտը բարելավման կարիք ունեն:

Աշխատանքային տարիքի բնակչության կառուցվածքը 2017-ին



Ընդհանուր առաջնային էներգիայի մատակարարման կառուցվածքը 2016-ին



ՀՏՀ գլոբալ մրցունակության համաթիվ, դասակարգում 140-ից, 2018թ.



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՎԶԵԲ-ի հաշվարկները

Աղբյուրը՝ Էներգետիկայի միջազգային գործակալություն, ՎԶԵԲ-ի հաշվարկներ

Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական համաժողով

3. Կառավարության գերակայությունները և շահագրգիռ կողմերի ներգրավումը

European Bank
for Reconstruction and Development

3.1. Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների գերակա նպատակները

2014-2025թթ. Հայաստանի զարգացման ռազմավարությունը նախատեսում էր հասարակության բարեկեցության բարձրացման ճանապարհային քարտեզ և հիմնված էր հետևյալ չորս գերակա նպատակների վրա.

1. Բարձրորակ աշխատատեղերի ստեղծում,
2. Մարդկային կապիտալի զարգացում,
3. Սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործում,
4. Պետական կառավարման և վարչարարության արդիականացում:

2018 թվականի մայիսին տեղի ունեցած խաղաղ «Թավշյա հեղափոխությունից» հետո նոր իշխանությունները նախանշեցին նոր առաջնահերթություններ՝ ներառական տնտեսական զարգացումն ապահովելու համար, ներառյալ.

- **Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության խթանում,**
- **Գյուղատնտեսության ոլորտի** արդյունավետության, չափանիշների և եկամտաբերության բարձրացում,
- **Զբոսաշրջության զարգացում՝** որպես աճի և աշխատատեղերի ստեղծման շարժիչ ուժ,
- **Արդյունավետ, հաշվետու և թափանցիկ** կառավարման հաստատում՝ Հայաստանի զարգացմանը աջակցելու նպատակով:

Կառավարությունը ներկայումս բազմակողմանիորեն վերանայում է ռազմավարական զարգացման շրջանակը՝ զարգացման երկարաժամկետ ազգային ծրագրի, ոլորտային և հորիզոնական ռազմավարությունների տեսանկյուններից: Պլանավորվում է, որ պետական կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը պատրաստ կլինի իրականացման համար 2020 թվականից:

3.2. ՎԶԵԲ-ի կողմից առաջարկվող բարեփոխումների ոլորտները համապարփակ կերպով համաձայնեցված են իշխանությունների հետ

- Գործարար կլիմայի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ ներդրումային կլիմայի հետ կապված քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության, վերլուծության և կարողությունների զարգացման միջոցով.Գործարար կլիմայի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ ներդրումային կլիմայի հետ կապված քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության, վերլուծության և կարողությունների զարգացման միջոցով,
- Տեղական արժույթի և փողի շուկաների զարգացում,Տեղական արժույթի և փողի շուկաների զարգացում,
- Մրցակցային քաղաքականության ոլորտում կարողությունների զարգացում և ինստիտուցիոնալ ամրապնդում,
- Կորպորատիվ կառավարման բարելավում ինչպես գործառույթների, այնպես էլ քաղաքականության վերաբերյալ երկխոսության միջոցով,
- Անվճարունակության մասին օրենսդրություն, դատական համակարգի կարողությունների զարգացում,
- Պետություն-մասնավոր գործընկերություններ:

3.3. Քաղաքացիական հասարակության հիմնական ուղերձը ՎԶԵԲ-ին

- Շարունակել կորպորատիվ թափանցիկության և կառավարման բարելավման միջոցառումների խթանումը,
- Աջակցել հակակոռուպցիոն և ապամենաշնորհացման ազգային ջանքերին,
- ՔՀԿ-ների համար հասանելի դարձնել Բանկի ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մասին տեղեկությունները,
- Զգոնություն՝ ներդրումային ծրագրերի բացասական սոցիալական և բնապահպանական հետևանքները կանխելու նպատակով,
- Հայաստանի վերաբերյալ ռազմավարությանը կից ներկայացված՝ քաղաքական գնահատոմը բարձր է գնահատվել Հայաստանի համատեքստը համարժեք կերպով արտացոլելու համար:

4. ՎԶԵԲ-ի՝ Հայաստանի վերաբերյալ ռազմավարության աջնահերթությունների սահմանում

European Bank
for Reconstruction and Development

Ի՞նչ է պետք փոխել. (Երկրի վերաբերյալ դիագնոստիկա)	Հնարավո՞ր է արդյոք դա փոխել. (Քաղաքական տնտեսություն)	Ի՞նչ կարող է անել Բանկը. (Ինստիտուցիոնալ հնարավորություններ)	Ռազմավարական առաջնահերթություններ 2019-2024	Ի՞նչ ենք ուզում տեսնել (Արդյունքներ)
• Թույլ ինստիտուտները, ընկալվող կոռուպցիայի բարձր, թեև նվազող մակարդակը և տարածված ոչ պաշտոնական կապերը ավանդաբար կաշկանդել են մրցակցությունը և դանդաղեցրել մասնավոր հատվածի կատարողականը: • Բիզնես միջավայրի մարտահրավերներն ու կորպորատիվ կառավարման ցածր ստանդարտները ևս սահմանափակում են մասնավոր հատվածի աճը: • Արտահանման զամբյուղում գերակշռում են առաջնային ապրանքները և սահմանափակ քանակությամբ ցածր հավելյալ արժեք ունեցող արտադրանքը: • Բնական պաշարների ոլորտում առկա է արդիականացման և ստանդարտների կատարելագործման ներուժ:	• Նոր կառավարությունը մարտահրավեր է նետում ստատուս քվոյին՝ 2018թ. -ի Թավշյա հեղափոխությունից հետո, և ի ցույց դնում իր հանձնառությունը՝ կոռուպցիան վերացնելու և պետական կառավարման ոլորտը արդիականացնելու հարցում: • Եթե բարեփոխումների շարունակական թափը կայուն լինի, դա կարող է նպաստավոր միջավայր ստեղծել մասնավոր հատվածի համար: • Արդեն սկսվել են զգալի բարեփոխումներ մաքսային ոլորտում: • Շոշափելի տնտեսական և սոցիալական բարելավումների առումով հասարակության սպասումները մեծ են, իսկ մարտահրավերները՝ բավականին բարդ:	• Ուղղակի և անուղղակի ֆինանսավորում և խորհրդատվություն ՓՄՁ-ների և կորպորացիաների համար, ներառյալ ՍՓՄՁ վարկային գծերը, մարզերի զարգացման և ոչ բավարար կերպով սպասարկվող խմբերի ֆինանսավորումը: • Հատուկ մշակված պրոդուկտներ՝ ներգրավելու օտարերկրյա ներդրողներին և աջակցելու տեղական ընկերությունների ընդլայնմանը: • Պատասխանատու և ներառական հանքարդյունաբերության համար միջազգային լավագույն ստանդարտների կիրառման խթանում: • Բիզնես կլիմայի և տնտեսական բարեփոխումների ուղղությամբ նպատակային քաղաքականությունների մշակում: • Աջակցություն պետական կառավարման և պետական ֆինանսների կառավարման ոլորտներում համապատասխան նախաձեռնություններին:	*Ամրապնդել մասնավոր հատվածի մրցունակությունը, բարելավել կառավարման ոլորտը և օժանդակել բիզնես միջավայրի բարեփոխումներին*	• ՓՄՁ-ների և կորպորացիաների կարողությունների ուժեղացում՝ աճելու և հավելյալ արժեք ստեղծելու նպատակով, • Արտահանման աճ և առևտրի ու ներդրումների հոսքերի ավելացում, • Ֆինանսների ավելի լայնածավալ հասանելիություն, մասնավորապես՝ թերի սպասարկվող հատվածների համար, • Բարելավված տնտեսական կառավարում և ավելի մեծ մրցակցություն:
• Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության լուծումների մշակումը կօգնի բարելավել երկրի էներգետիկ անվտանգությունը, ինչպես նաև անցում կատարել դեպի կանաչ տնտեսություն: • Ենթակառուցվածքների անբավարար և անորակ լինելու պատճառով սահմանափակվում է ներքին և արտաքին ինտեգրումը, ինչը մեծացնում է առևտրի արժեքը, սահմանափակում շուկաների հասանելիությունը և նվազեցնում գրավչությունը ՕՈՒՆ-ների համար: • Ենթակառուցվածքները և հիմնական ոլորտները խոցելի են ֆիզիկական կլիմայի ռիսկերի նկատմամբ: • Տրանսպորտային խոչընդոտները մեծացնում են առևտրի արժեքը, սահմանափակում շուկաների հասանելիությունը և նվազեցնում գրավչությունը ՕՈՒՆ-ների համար:	• Կառավարությունը հանձնառու է վերականգնվող էներգիայի ոլորտը զարգացնելու հարցում: Արևային էներգիան կարող է մրցունակ լինել՝ շատ բարենպաստ կլիմայական պայմանների և ծախսերի նվազման գլոբալ միտման շնորհիվ: • Կառավարությունն աջակցում է մասնավոր ներդրումներին, որոնք կարևոր են էներգետիկ անվտանգության և ծառայությունների որակի համար: • Պետական հատվածի լայնածավալ ներդրումների համար հարկաբյուջետային կարողությունները սահմանափակ են: • Դեպի ծով ելք չունեցող դիրքը և տարածաշրջանային աշխարհաքաղաքականությունը մարտահրավեր են ստեղծում գլոբալ ինտեգրման համար, ինչպես առևտրի, այնպես էլ էներգետիկ կապերի առումով:	• Վերականգնվող էներգետիկայի բանկայնացվող ծրագրերի ֆինանսավորման և խորհրդատվության տրամադրման հուսալի փորձ: • Հատուկ պրոդուկտներ՝ կանաչ տնտեսության ներդրումներ, այդ թվում՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը/էներգաարդյունավետությանը և կլիմայի կայունության ապահովմանն ուղղված ջանքերը ֆինանսավորելու համար: • Ենթակառուցվածքների արդիականացման պլանավորման և ֆինանսավորման փորձ՝ հաշվի առնելով պետական ֆինանսավորման սահմանափակումները, այդ թվում՝ տուվերեն գործարքները, ՊՄԳ-ներ/արտոնություններ (կոնցեսիաներ): • ԵՄ-ի, այլ ՄՖՀ-ների և դոնորների հետ սերտ համագործակցության լայնածավալ փորձ՝ մատչելիության և իրականացման կարողությունների սահմանափակումների հետ կապված խնդիրները լուծելու հարցում:	*Խթանել կայուն ենթակառուցվածքները՝ առևտրայնացման և դեպի կանաչ տնտեսություն անցման միջոցով*	• Վերականգնվող էներգիայի հզորությունների մեծացում, էներգիայի ավելի դիվերսիֆիկացված տեսակներ: • Հասարակական կոմունալ տնտեսությունների և ՊՁ-ների առևտրայնացում և վերակազմավորում: Քաղաքային ենթակառուցվածքների բարելավված կատարողական, ծառայությունների մատուցման որակ և կայունություն: • Տրանսպորտի, կապի և էներգետիկ ցանցերի բարելավված որակ և միացնելիություն:

5. Միջոցառումների և արդյունքների շրջանակը

European Bank
for Reconstruction and Development

Առաջնահերթություն 1. Ամրապնդել մասնավոր հատվածի մրցունակությունը, կատարելագործել կառավարումը և աջակցել բիզնես միջավայրի բարեփոխումներին

Հիմնական նպատակները (արդյունքները)	Միջոցառումներ (ելքային արդյունքներ)	Հետևելու համար կիրառվող ցուցանիշներ
ՓՄՁ-ների և կորպորացիաների հզորացված կարողություններ՝ աճելու և հավելյալ արժեք ստեղծելու համար **Ընդլայնված արտահանում և առևտրի ու ներդրումների հոսքերի ավելացում**	• Փոքր բիզնեսի նախաձեռնության ներքո ՄՓՄՁ-ներին տրամադրել ուղղակի և անուղղակի ֆինանսավորում, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների մի ամբողջ շարք, այդ թվում՝ առևտրի մրցունակության և արժեշղթաների կատարելագործման նպատակով: • Աջակցություն հաճախորդների կողմից կլիմայի նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը Կլիմայի փոփոխության՝ ֆինանսների և տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնի միջոցով (FINTECC): • Բնական ռեսուրսների ոլորտի ֆինանսավորում՝ կենտրոնանալով կայուն, կլիմայական առանձնահատկությունները հաշվի առնող և պատասխանատու հանքարդյունաբերության վրա, որը զուգորդվում է սիստեմատիկ բացահայտմանն ու թափանցիկության բարձրացմանն ուղղված քաղաքականությամբ (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (ԱՃԹՆ)): • Փնտրել հնարավորություններ արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության ոլորտներում՝ ներգրավվելով ընդունելի տեղական մասնավոր ներդրողների հետ, զարգացնելով առկա հարաբերությունները և խթանելով որակյալ ՕՌԻՆ-եր և հմտությունների փոխանցում (այդ թվում նաև սփյուռքից): • Աջակցել առևտրի ծավալի մեծացմանը Առևտրի հեշտացման ծրագրի (TFP) և խորհրդատվական ծառայությունների միջոցով:	• Խորհրդատվական ծառայություն ստացած հաճախորդների թիվը, որոնք զեկուցում են բարձր արտադրողականության, շրջանառության և արտահանման մասին • Աջակցություն ստացած ԱՖԾ գործարքների ընդհանուր թիվը / ծավալը
Ֆինանսների ավելի լայն հասանելիություն, մասնավորապես՝ թերի սպասարկվող հատվածների համար	• ՖՀ-ների կողմից տրամադրվող վարկավորման նպատակային շրջանակներ և խորհրդատվություն գործընկեր բանկերի և վերջնական շահառուների համար, այդ թվում՝ ՄՓՄՁ-ների, մարզերի զարգացման և ներառականության ծրագրերի համար (օրինակ՝ Կանայք բիզնեսում): • Գործընկեր բանկերի հետ նպատակային վարկավորման շրջանակ էներգաարդյունավետության ոլորտում: • Խթանել սեփական կապիտալի մշակույթը և հեշտացնել բաժնային ներդրումները: • Աշխատել ընկերությունների և գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ՝ օգտագործելով ֆինանսավորման նոր գործիքներ, այդ թվում՝ Ռիսկերը կիսելու գործիքը (ՌԿԳ), կապիտալի շուկայի գործիքները (օրինակ՝ կորպորատիվ պարտատոմսեր) և տեղական արժույթով վարկերը: • Քաղաքական ներգրավվածություն տեղական արժույթի, փողի և կապիտալի շուկայի (օրինակ՝ փողի շուկայի կատարելագործում՝ ներառյալ ռեպո, փողի շուկայի աշխատանքային խմբի միջոցով փողի շուկայի ուղենիշի մշակմանն աջակցություն, ածանցյալների մշակում, քրաուդ-ֆանդինգ, կարողությունների զարգացում)՝ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ:	• Տեղաբաշխված ՄՓՄՁ վարկերի ընդհանուր քանակը / ծավալը (ներառյալ տեղական արժույթով վարկեր, Կանայք բիզնեսում) • Ներդրվել է ֆինանսավորման նոր գործիք կամ մեթոդ
Բարելավված տնտեսական կառավարում և ավելի մեծ մրցակցություն	• Բարելավել կարողությունները՝ բարեփոխումներ իրականացնելու նպատակով, ներառյալ. ○ Բարելավել բիզնես կլիման (ներառյալ բիզնեսի և ներդրողների խորհուրդը, ներդրումային միջավայրին առնչվող միջոցառումները, բիզնեսի հետ կապված բողոքների մեխանիզմի ներուժը և գենդերային ասպեկտները հաշվի առնող ներդրումային կլիման), զարգացնել կառավարության՝ բարեփոխումների հետ կապված ինստիտուցիոնալ կարողությունները, ○ Մրցակցության հարցերով զբաղվող և պետական գնումներ իրականացնող մարմինների կարողությունները, ○ Անվճարունակության կառավարման ոլորտում (ներառյալ անվճարունակության կառավարիչների համար կարգավորող շրջանակի ամրապնդում, անվճարունակության դատարանին աջակցություն, անվճարունակության ձեռնարկ և ուսուցում), ○ Դատական համակարգում կարողությունների զարգացում/ուսուցում:	• Բիզնես միջավայրի իրավական, ինստիտուցիոնալ և կարգավորող բարելավումներ

5. Միջոցառումների և արդյունքների շրջանակը

European Bank
for Reconstruction and Development

Առաջնահերթություն 2. Կայուն ենթակառուցվածքների խթանում՝ առևտրայնացման և դեպի կանաչ տնտեսություն անցման միջոցով

Հիմնական նպատակները (արդյունքները)	**Միջոցառումներ** (ելքային արդյունքներ)	**Հետևելու համար կիրառվող ցուցանիշներ**
Վերականգնվող էներգիայի հզորությունների մեծացում, էներգիայի ավելի դիվերսիֆիկացված տեսակներ:	• Ուսումնասիրել գրինֆիլդ և բրաունֆիլդ (նոր արդյունաբերական գոտիների կառուցում և հների թարմացում) ներդրումների նոր հնարավորությունները՝ առաջնահերթություն տալով կոմունալ մասշտաբի վերականգնվող աղբյուրներին, ցանցերի ամրապնդմանը և բարձրավոլտ ցանցի վերականգնմանը, հիդրոէլեկտրակայաններին և գազով աշխատող ջերմային էլեկտրակայաններին, էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներին, խելացի հաշվիչների ներդրմանն ու համատարած օգտագործմանը: • Աջակցել վերականգնվող էներգիայի աճուրդների ներդրմանն ու իրականացմանը: • Շարունակել ներգրավվածությունը Հայաստանի էլեկտրական ցանցերի (ՀԷՑ) հետ՝կատարելով կառավարման և ենթակառուցվածքների բարելավման նպատակով ներդրումներ:	• Ավելացվել է վերականգնվող էլեկտրաէներգիայի հզորությունը (ՄՎտ) • Իրավական, կարգավորող կամ ինստիտուցիոնալ բարելավումներ են գրանցվել էներգետիկայի ոլորտում (Վերականգնվող էներգիա/էներգաարդյունավետություն)
Հասարակական կոմունալ տնտեսությունների և ՊՁ-ների առևտրայնացում և վերակազմավորում: Քաղաքային ենթակառուցվածքների բարելավված կատարողականը, ծառայությունների մատուցման որակը և կայունությունը: **Բարելավված կատարողական, ծառայությունների մատուցում և հանրային ենթակառուցվածքների կայունություն**	• Հանրային կոմունալ տնտեսության և ծառայությունների առևտրայնացում, այդ թվում՝ մասնավոր հատվածի մասնակցության միջոցով (օրինակ՝ համայնքային ծառայություններ, փոստային ծառայություններ): • Ենթակառուցվածքների տրամադրման հարցում ներգրավվածություն քաղաքականության մշակմանը, ներառյալ՝ ծրագրերի մշակում և բիզնեսի հիմնավորում՝ ԵԾՆԳ-ի օգնությամբ, աջակցություն կարողությունների զարգացման և ՊՄԳ-ի համար նախապատրաստվելու հարցում (ՊՄԳ-ների իրավական և կարգավորող շրջանակ): • Աջակցել հանրային ենթակառուցվածքների զարգացմանը (օրինակ՝ տրանսպորտի, քաղաքային ենթակառուցվածքների, քաղաքների վերածնման և կայուն զարգացման, էներգաարդյունավետության և հանրային ենթակառուցվածքներում և շենքերում կլիմայի բարելավված կայունության ապահովում), այդ թվում՝ մասնավոր հատվածի մասնակցությամբ: • Համագործակցել քաղաքապետարանների հետ, այդ թվում՝ Կանաչ քաղաքների գործողությունների ծրագրերի միջոցով, կայուն ենթակառուցվածքներում միջ-ոլորտային ներդրումներ իրականացնելու նպատակով: • Ջրային ռեսուրսների կառավարում (օրինակ՝ ջրամբարներ, ոռոգում և գյուղատնտեսության մեջ ջրի օգտագործում):	• Ենթակառուցվածքների որակը բարելավվել է • Բարելավվել են ենթակառուցվածքների (ԿՔԳՇ) իրավական, կարգավորող կամ ինստիտուցիոնալ շրջանակները
Տրանսպորտի, կապի և էներգետիկ ցանցերի բարելավված որակը և միացնելիությունը:	• Ազգային և միջսահմանային փոխկապակցման ենթակառուցվածքներ, ներառյալ՝ տրանսպորտային միջանցքների, սահմանային անցման և հեռահաղորդակցման ցանցերի անվտանգության բարձրացում: • Ուսումնասիրել տարածաշրջանային առևտրի հոսքերը բարելավելու հնարավորությունները՝ բարելավված լոգիստիկայի միջոցով: • Բարելավել էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքների կայունությունը կլիմայի փոփոխության պայմաններում:	• Բարելավվել է ենթակառուցվածքի որակը մարզերի ներսում և/կամ դրանց միջև

6. ՎԶԵԲ-ի գործունեության ոլորտներում միջազգային գործընկերների փոխլրացման քարտեզագրում

European Bank for Reconstruction and Development

ՎԶԵԲ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

		Հատվածներ									Ոլորտներ			
		Արդյունաբերություն, առևտուր և ագրոբիզնես					Կայուն ենթակառուցվածք		Ֆինանսական հաստատություններ		Ռազմավարական նախաձեռնություններ			
Ինդիկատիվ միջին տարեկան ներդրումները / դրամաշնորհները (€ մլն, 2015-2018), բացառությամբ բյուջեի ճծանդակության		Ագրոբիզնես	Արտադրություն և ծառայություններ	Անշարժ գույք և տուրիզմ	ՏՀՏ	Բնական պաշարներ	Էներգետիկա	Ենթակառուցվածքներ	Բանկային ոլորտ	Ոչ բանկային ֆինանսական հաստատություններ	Կանաչ տնտեսություն	Ներառականություն և գենդերային հավասարություն	Տեղական արժույթի և կապիտալի շուկաներ	Փոքր բիզնես
ԱԶԲ	74	€P	€P				€P	€P	€P	€			€P	€P
ՍԱԶԲ	26	€						€	€				€	€
ԵՄ	33	€P	€	€	€		€P	€P	€		€P	€P		€P
ԵՆԲ	44	€		€			€P	€P	€		€P			€
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (ՀԲ Գրուպ)	76	€P		€	€	€P	€P	€P	€P		€P	€P	€P	€P
ՖՄԿ (ՀԲ Գրուպ)	75	€	€	€	€	€	€P		€	€	€P	€P	€	
ՖԶԳ	31	€P					€P	€P			€P			
KfW	54	€P		€		€	€P	€P	€		€P			
ՎԶԵԲ	84	€	€			€P	€P	€P	€P		€P		€P	€P

€ Զգալի ներդրումների ոլորտ

P Զգալի քաղաքական ներգրավվածության ոլորտ

● Կենտրոնանում է հիմնականում մասնավոր հատվածի վրա

○ Կենտրոնանում է հիմնականում պետական ոլորտի վրա

Համագործակցության պոտենցիալ ոլորտները

Մրցակցային

- Համագործակցել ԵՄ-ի հետ՝ ֆինանսների հասանելիությունը բարձրացնելու և իրականացնելու, ի թիվս այլոց, ՄՓՄՁ-ների, տարածաշրջանային զարգացման և էներգաարդյունավետության գծով ծրագրեր:
- Համագործակցել ԵՄ-ի և այլ դոնորների հետ՝ բիզնեսներին խորհրդատվական ծառայություններ մատուցելու ուղղությամբ:

Կանաչ

- Համագործակցել ԵՄ-ի, ԵՆԲ-ի, ՄՖԿ-ի (ՀԲԳրուպ) և այլ համաֆինանսավորողների հետ՝ էներգետիկ ենթակառուցվածքների բարելավման և վերականգնվող էներգիայի և էներգախնայողության զարգացման ուղղություններով:

Ինտեգրված

- Բարելավել տրանսպորտի և կապի ենթակառուցվածքը ԵՄ-ի, ԵՆԲ-ի և այլ հնարավոր համաֆինանսավորողների հետ միասին:

Ճկուն

- Աշխատել ԵՄ-ի հետ՝ ֆինանսների հասանելիությունը բարձրացնելու և իրականացնելու, ի թիվս այլոց, ՓՄՁ-ների, տարածաշրջանային զարգացման և էներգաարդյունավետության գծով ծրագրերը:
- Բիզնեսներին խորհրդատվական ծառայություններ տրամադրել ԵՄ-ի աջակցությամբ:

Ծանոթություն. ՄՖՀ-ների քարտեզագրումը՝ հիմնված հանրայնորեն մատչելի տվյալների վրա (բացառությամբ բյուջեի օժանդակության), որտեղ ՄՖՀ-ների զգալի ներդրումները սահմանված են որպես 2015-2018 թվականների միջև կնքված ներդրումների 5% -ից ավելին

PUBLIC

7. Իրականացման ռիսկեր, բնապահպանական և սոցիալական ազդեցության հետևանքներ

European Bank
for Reconstruction and Development

Ռազմավարության իրականացման ռիսկերը	Հավանականություն	Ազդեցություն
▪ **Կայուն տնտեսական աճի և արտարժույթի կայունության** բացակայություն, մինչդեռ դրանք անհրաժեշտ են՝ հարկաբյուջետային տարածքը թեթևացնելու և պետական պարտքի մատչելիության հետ կապված խոչընդոտները թուլացնելու համար:		
▪ **Քաղաքական գործընթացի արգելակում և բարեփոխումների շուրջ անորոշություն**, մինչդեռ բարեփոխումներն ուղղված են տնտեսության ապամենաշնորհմանը, օլիգարխիկ կարտելների բաժանմանը և կոռուպցիայի վերացմանը:		
▪ **Դանդաղ առաջընթաց ԵՄ-ի հետ ներգրավվածության խորացման գործում՝** ԵԱՏՄ անդամակցության ներքո թույլ տրվող սահմաններում:		
▪ **Տարածաշրջանային անվտանգության առումով անկայուն իրավիճակ:.**		
▪ Շարունակական քաղաքական փոփոխությունների արդյունքում **սփյուռքի և ոչ սփյուռքյան ՕՌԻՆների անբավարար մակարդակներ:**		
▪ **Անբավարար դրամաշնորհային ֆինանսավորում և տեղական արժույթի երկարաժամկետ ֆինանսավորում** մրցակցային պայմաններով:		

Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետևանքները

- **Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ու Շահագրգիռ կողմերի ներգրավվածության ռազմավարական պլանավորում գնահատում և կառավարում.** Նպատակը՝ բարելավել ԲՍՍԳ որոշում կայացնողների և հաճախորդների գիտելիքներն ու պրակտիկան և հեշտացնել ու բարելավել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը: Կարգավորող մարմինների կողմից ռազմավարական պլանավորումը կդառնա ավելի ու ավելի կարևոր, և ՎԶԵԲ-ը կաջակցի այնպիսի ամբողջական որոշումների կայացմանը, ինչպիսիք են ՇՄԱԳ/ՇՄՌԳ-ն: Այս և այլ գործողություններին աջակցելու համար կարող է անհրաժեշտ լինել ՏՀ ֆինանսավորում:
- **Աշխատանք և աշխատանքային պայմաններ.** Բանկն ապահովելու է, որ հաճախորդների կադրային քաղաքականությունը և աշխատանքային պրակտիկան համապատասխանեն ՎԶԵԲ-ի ԿՊՀ-ին: Բանկն առանձնահատուկ ուշադրություն կդարձնի կանանց, փոքրամասնությունների, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և աշխատակից չհանդիսացող աշխատողների նկատմամբ խտրականության հնարավոր դրսևորումներին:
- **Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում ու վերահսկում.** Բանկի ներդրումային առաջնահերթությունները կօգնեն նվազեցնել ՋԳ արտանետումները: Բանկը նպատակ ունի օժանդակել շրջանաձև տնտեսության և թափոնների կառավարման ծրագրերի մշակմանը, ներառյալ ենթակառուցվածքները և համակարգերը, որոնք խթանում են աղբի տեսակավորումը աղբյուրի մոտ և վերամշակումը:
- **Առողջություն և անվտանգություն.** Նպատակը՝ բարելավել առողջության և անվտանգության չափանիշները բոլոր ոլորտներում: Ճանապարհային և երթևեկության անվտանգությունը, ներառյալ տրանսպորտային պարկի կառավարումը առաջնահերթ խնդիրներ են, և հնարավոր է պահանջվի հաճախորդների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը: Այս միջոցառումներին աջակցելու համար կարող է պահանջվել ՏՀ ֆինանսավորում:
- **Հողերի օտարում, հարկադիր վերաբնակեցում և տնտեսական տեղահանում.** ՎԶԵԲ-ի ծրագրերին համապատասխանող մեծածավալ հողատարածքների օտարման փորձը լավ ուսումնասիրված չէ: Բանկը խրախուսելու է հաճախորդներին և պետական սուբյեկտներին՝ բարելավել ազդակիր անձանց համար խորհրդատվությունը և տեղեկությունների տրամադրումը: Այն դեպքում, երբ հողը զբաղեցնող անձինք չունեն դրա օրինական իրավունքը, հաճախորդները պետք է ապահովեն, որ փոխհատուցումը և կենսապահովման վերականգնման միջոցները տրամադրվեն Բանկի պահանջներին համապատասխան:
- **Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական պաշարների կայուն կառավարում.** Պահպանվող տարածքների կառավարումը երկրում փոփոխական է, և ՎԶԵԲ-ը կաշխատի կարգավորողների և հաճախորդների հետ՝ ապահովելու, որ ՎԶԵԲ-ի ծրագրերը համապատասխանեն երկրի կառավարության ազգային և միջազգային պարտավորություններին: Այս միջոցառումներին աջակցելու համար կարող է պահանջվել ՏՀ ֆինանսավորում:

8. Դոնորների կողմից տրամադրվող համաֆինանսավորման գնահատում

European Bank
for Reconstruction and Development

8.1. Կարիքների գնահատում՝ Հայաստանի վերաբերյալ նոր ռազմավարության ժամանակահատվածի համար

Դոնորների կողմից տրամադրվող ֆինանսավորումը կպահանջվի Հայաստանի վերաբերյալ ռազմավարության ռազմավարական նպատակներին հասնելու համար, ներառյալ հետևյալ նպատակները.

- Ռիսկերը մեղմացնող գործիքներ՝ տեղական արժույթով վարկավորումը խթանելու, թերի սպասարկվող բնակչության համար ֆինանսավորման մատչելիությունը և հասանելիությունը բարձրացնելու նպատակով,
- Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ոլորտում նոր ներդրումներին աջակցություն, ներառյալ գործընկեր ֆինանսական հաստատությունների միջոցով ուղղվող դրամաշնորհային միջոցները,
- Մունիցիպալ և տրանսպորտային ենթակառուցվածքների կայուն զարգացման ծրագրերի նախապատրաստում և իրականացում, ինչպես նաև աջակցություն կորպորատիվ զարգացման ծրագրերին,
- Ներդրումային կլիմայի և կառավարման ամրապնդմանն ուղղված բարեփոխումների խթանում, ինչպես նաև դատական համակարգում կարողությունների բարձրացում,
- Խորհրդատվական ծառայություններ՝ ՓՄՁ-ների մրցունակության և հավելյալ արժեքի խթանման համար:

8.2. Դոնորների կողմից ֆինանսավորման հնարավոր աղբյուրները

- **ԵՄ**-ն շարունակում է հանդիսանալ դոնորների կողմից ֆինանսավորման կարևոր աղբյուր, հիմնականում երկկողմ հատկացման և Հարևանության ներդրումային պլատֆորմի (ՀՆՊ) միջոցով: Ֆինանսավորման պոտենցիալ հնարավորությունները կարելի է ուսումնասիրել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ՓՄՁ-ների զարգացումը, ենթակառուցվածքները և էներգաարդյունավետությունը:
- Կանաչ քաղաքների ծրագրի համար տրամադրվող՝ **Կանաչ կլիմայի հիմնադրամի (ԿԿՀ)** միջոցները կարող են օգտագործվել՝ աջակցելու կայուն համայնքային ենթակառուցվածքների ներդրումներին: Բանկը կուսումնասիրի նաև ԿԿՀ-ի գործիքների միջոցով ֆինանսավորման այլ հնարավորությունները, ինչպես նաև **Կլիմայի ներդրումային ֆոնդից (ԿՆՖ)** հասանելի լրացուցիչ աջակցությունը:
- Հայաստանը իրավասու է ֆինանսավորում ստանալու Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության **(EEP)** հիմնադրամից, այդ թվում՝ համայքային «կանաչ» ծրագրերի համար:
- Կքննարկվի նաև **բազմադոնոր հիմնադրամներից** լրացուցիչ աջակցություն ստանալու հնարավորությունը: Ֆինանսավորման հնարավոր աղբյուրները ներառում են Վաղ անցումային շրջանի երկրների (ՎԱԵ) հիմնադրամը, ՓՄՁ տեղական արժույթով հատուկ հիմնադրամը՝ ՓՄՁ-ների համար տեղական արժույթով ֆինանսավորման հասանելիությանը նպաստելու համար, և Փոքր բիզնեսի ազդեցության հիմնադրամը (ՓԲԱՀ)՝ ՓՄՁ-ների զարգացմանն ու աճին աջակցելու համար:
- **Բաժնետերերի հատուկ հիմնադրամը (ԲՀՀ)** դոնորների ռեսուրսների կարևոր լրացում է, այդ թվում՝ ներդրումային կլիմային օժանդակող միջոցառումների համար:

Մատչելիության ընտրված ցուցիչներ

		ՎԶԵԲ-ի տարածաշրջանային պրոցենտիլ դասակարգում[1]
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (ԳՀ, ընթացիկ $)[2]	10,176	19րդ (գործառնության երկիր)
ՊԱԶՆ Երկիր	ԱՅՈ	Կիրառելի չէ
ՊԱԶՆ որպես համախառն ազգային եկամուտի մասնաբաժին (%)[3]	2.12	48րդ
ՊԱԶՆ մեկ շնչի հաշվով ($ - ներկայիս գները)[3]	87.17	60րդ

Աղբյուրներ [2] ԱՄՀ (2018), [3] ՏՀԶԿ (2017)

Դոնորների կողմից ֆինանսավորումը նախորդ ռազմավարության ընթացքում (€մ)[4]



Դրամաշնորհային ֆինանսավորման կարիք[5]



1. Հասարակ պրոցենտիլ կարգը, որը գրանցվել է որպես ՎԶԵԲ-երկրների մասնաբաժին (ՊԱԶՆ ցուցիչների դեպքում՝ ՊԱԶՆ գործարքությունների երկրներին մասնաբաժին), որոնք որոնք Հայաստանի համեմատ ավելի ցածր տեղերում են:
2. .2015 թվականի ՏՀ տվյալները հիմնված են ստանձնված պարտավորություններիվրա 2016թ. -ի մարտի վերջի դրությամբ(վերջին հասանելի ամսաթիվը նախքան տվյալներտեղափոխումը Դոնորներիհիմնադրամների նորհամակարգ): 2016-2018թթ. ՏՀ տվյալները հիմնված են ծրագրիմակարդակով հատկացված լիմիտների վրա: Համատեղներդրումային դրամաշնորհները կոնցեսիոն/զուգահեռվարկի գումարները հիմնված են համախառներեիկոդմից ստորագրված պայմանագրերի վրա:
3. Դրամաշնորհային ֆինանսավորման նախահաշվարկված կարիքները հիմնված են բանկային թիմերիկողմից գնահատված՝ գործառնական կարիքներիվրա այն ծրագրերի համար, որոնցվերջնական էտապն է 2019թ-ին: Գնահատվածկարիքները հիմնականում գերազանցում են դրամաշնորհիիփաստացի օգտագործումը, քանի որորոշ կարիքներ չեն կարողիրագործվել և կարող են հետաձգվել կամ կարող են բաժանվել և պահանջել մի քանիտարվա դրամահատկան կարիքների և իրողություններից ելնելով:

PUBLIC

Հավելված

European Bank
for Reconstruction and Development

Հավելված 1 Քաղաքական գնահատական՝ 1-ին Հոդվածի համատեքստում

European Bank
for Reconstruction and Development

Հայաստանի հանձնառությունը և Բանկի հիմնադրման մասին Համաձայնագրի 1-ին Հոդվածում ամրագրված քաղաքական սկզբունքների կիրառումը նախորդ ռազմավարության ժամանակահատվածում նշանավորվել է ժողովրդավարության, բազմակարծության և օրենքի գերակայության պահպանման վրա ավելի մեծ շեշտադրումով, մասնավորապես՝ 2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսներին կառավարության խաղաղ փոփոխությունից հետո: Նոր իշխանությունները պարտավորվել են խորքային փոփոխություններ իրականացնել հանուն Հայաստանի արդիականացման: Քանի որ բարեփոխումների գործընթացը գտնվում է վաղ փուլում, դեռ առկա են կարևոր մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարվեն:

2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսներին անցկացվող զանգվածային հակակառավարական ցույցերը, որոնք բնութագրվում են որպես ոչ բռնի «թավշյա հեղափոխություն», հանգեցրեցին խաղաղ իշխանափոխության: Հեղափոխությունը բարձրացրեց ՀՀ քաղաքացիների ակնկալիքները՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ամրապնդման ուղղությամբ, և նախորդ տարիների անհավասար անցումային շրջանից հետո ստեղծեց լայնածավալ բարեփոխումների եզակի հնարավորություն:

Իշխանափոխությունը ինստիտուցիոնալացվել է 2018 թվականի դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ, որոնք միջազգային դիտորդների կողմից գնահատվել են որպես «հիմնարար ազատությունները հարգող» ընտրություններ: Ընտրությունները հանգեցրեցին Հայաստանի քաղաքական լանդշաֆտի վերափոխմանը. հեղափոխության առաջնորդ՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ այժմ իշխող «Իմ քայլը» դաշինքը համոզիչ հաղթանակ տարավ՝ ստանալով ձայների 70,4%-ը, իսկ նախկինում իշխող հանրապետական կուսակցությանը չհաջողվեց հատել 5% շեմը: «Բարգավաճ Հայաստանը» և «Լուսավոր Հայաստանը» զբաղեցրեցին հեռավոր երկրորդ և երրորդ տեղերը (համապատասխանաբար՝ 8,3% և 6,4% ձայն) և դարձան միակ երկու այլ կուսակցությունները, որոնք մտան նոր խորհրդարան:

Հիմնվելով ժողովրդի հզոր աջակցության վրա, նոր կառավարությունը ձեռնամուխ է եղել բարեփոխումների հավակնոտ ծրագրի նպատակ ունենալով ժողովրդավարացնել քաղաքական համակարգը և ապամոնոտաժել քաղաքական տնտեսության այն մոդելը, որում քաղաքականությունը փոխկապակցված է բիզնեսի հետ: Կառավարությունը ձեռնարկել է որոշ վճռական քայլեր, մասնավորապես առաջընթաց է գրանցել կոռուպցիայի դեմ պայքարում և լավ կառավարման կատարելագործման և օրենքի գերակայության ոլորտներում: Բարելավվել է նաև մարդու իրավունքների հետ կապված ընդհանուր իրավիճակը: Այնուամենայնիվ, բարեփոխումները համակարգային և կայուն դարձնելու համար անհրաժեշտ է ամրապնդել ուժեղ քաղաքական կամքը հզորացված ինստիտուտների և վարչական կարողությունների կատարելագործման միջոցով: Հատկապես կարևոր խնդիր է դատական համակարգի անկախության, արդյունավետության և հաշվետվողականության ամրապնդումը: Հայաստանը նաև պետք է ընդունի հակախտրականության մասին համապարփակ օրենք՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

2015թ. -ի դեկտեմբերյան հանրաքվեի միջոցով ընդունված սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանը կիսանախագահական հանրապետությունից անցում կատարեց դեպի խորհրդարանական հանրապետություն՝ ավարտելով անցումը 2018թ. -ին: Նոր համակարգում Վարչապետն ունի գործադիր իշխանության իրականացման ուժեղ լիազորություններ:

Հայաստանը անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) 2015թ. -ի հունվարից: Զուգահեռաբար, 2017թ. -ի նոյեմբերին Հայաստանը ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ) Եվրամիության հետ (ԵՄ), որը 2018թ. հունիսի 1-ին մտել է պայմանական կիրարկման փուլ: Ստորագրելով ՀԸԳՀ-ն՝ Հայաստանը ևս մեկ անգամ վերահաստատել է իր նվիրվածությունը ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ամրապնդմանը: Այս բոլոր ջանքերում երկիրը սերտորեն համագործակցել է Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի հետ:

Հայաստանի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական համատեքստը բարդ է: Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ հակամարտությունը մնում է չկարգավորված, և ԵԱՀԿ Մինսկի խմբի (որը համանախագահում են Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները) միջազգային միջնորդության ջանքերը շարունակվում են:

Ազատ ընտրություններ և ներկայացուցչական կառավարություն

Ազատ, արդար և մրցակցային ընտրություններ

Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է գաղտնի քվեարկությամբ անցկացվող համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա անցկացվող ազատ ընտրություններ:

Նախորդ ռազմավարության ժամանակահատվածում Հայաստանը անցկացրել էր երկու խորհրդարանական ընտրություն՝ 2017 թվականի ապրիլին և 2018թ. -ի դեկտեմբերին, երկուսն էլ՝ նոր և բարդ երկաստիճան համամասնական համակարգի ներքո մեկ փակ համապետական ցուցակ և 13 բաց տարածքային ցուցակներ:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) գլխավորած Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության (ԸՄԴԱ) գնահատմամբ 2017 թվականի ապրիլյան ընտրությունները հիմնականում «լավ էին կազմակերպված» և հիմնարար ազատությունները «ընդհանուր առմամբ պահպանված էին»: Միևնույն ժամանակ, միջազգային դիտորդներն արձանագրել էին, որ ընտրությունների վրա «ստվեր նետեցին արժանահավատ տեղեկությունները այն մասին, որ տեղի են ունեցել ընտրակաշառքի բաժանման, ինչպես նաև հանրային ծառայողների և մասնավոր ընկերությունների աշխատակիցների վրա ճնշումներ գործադրելու դեպքեր», ինչը նպաստեց «ընտրական գործընթացի նկատմամբ համընդհանուր հանրային վստահության նվազմանը»:[1]

[1] *ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ). Հայաստանի Հանրապետություն, խորհրդարանական ընտրություններ, 2017թ. ապրիլի 2, Եզրափակիչ զեկույց, Վարշավա, 2017թ. հուլիսի 10, էջ 1.*

Հավելված 1 Քաղաքական գնահատական՝ 1-ին Հոդվածի համատեքստում

European Bank
for Reconstruction and Development

2018թ. -ի դեկտեմբերի ընտրությունները արտահերթ ընտրություններ էին, որոնք հաջորդեցին 2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսների հակակառավարական զանգվածային ցույցերից հետո երկրում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններին: 2017թ. -ի ապրիլյան քվեարկության համեմատ կարևոր տարբերությունն այն էր, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ղեկավարած ԸՄԴԱ-ն եզրակացրեց, որ 2018թ. -ի դեկտեմբերի ընտրությունները «անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը»: Դիտորդները բարձր գնահատեցին բաց քաղաքական քննարկումները, որոնք նպաստեցին աշխույժ քարոզարշավին, «թեպետ առցանց բորբոքիչ հռետորաբանության դեպքերը մտահոգիչ էին», իրական մրցակցությունը՝ ընտրողների քվեների գնման և ճնշման ընդհանուր բացակայության պայմաններում, և ընտրությունների լավ կազմակերպումը: Նրանք, սակայն, նաև նշել էին, որ քարոզչության ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է՝ կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի հանգամանքով պայմանավորված: [2]

Իշխանությունների տարանջատում և զսպումների ու հակակշիռների արդյունավետ մեխանիզմ

Հայաստանի Սահմանադրությունը նախատեսում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև տարանջատում:

Իշխանության հավասարակշռությունը փոփոխվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեից հետո իրականացվող սահմանադրական փոփոխությունների ներքո: Արդյունքում Հայաստանը կիսանախագահական հանրապետությունից դարձել է խորհրդարանական հանրապետություն՝ անցում, որը, ընդհանուր առմամբ, դրականորեն գնահատվեց Վենետիկի հանձնաժողովի կողմից.[3] Նոր համակարգում՝ ամրապնդվել են կառավարության՝ գործադիր լիազորությունները, ինչպես նաև խորհրդարանի՝ օրենսդրական վերահսկողության կարողությունը:

Օրենսդիր իշխանությունը վերապահվում է Ազգային ժողովին (Խորհրդարան), որն ընտրվում է համամասնական ընտրակարգով հինգ տարի ժամկետով և կազմված է առնվազն 101 պատգամավորից: Նոր Սահմանադրության համաձայն, կառավարություն կազմելու համար անհրաժեշտ է կայուն մեծամասնություն, որը սահմանվում է որպես տեղերի 54%: ՀՀ օրենքը սահմանում է, որ եթե հաղթող կողմը կամ դաշինքը ստանա տեղերի 54%-ից պակաս, ապա նրան կտրվեն լրացուցիչ տեղեր՝ անհրաժեշտ կայուն մեծամասնությունն ապահովելու համար:

Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանան նախապես հատկացված 101 տեղերի ավելի քան երկու երրորդը, ապա մյուս մրցակիցներին, ովքեր շահել են տեղեր, լրացուցիչ տեղեր են վերագրվում հավաքական մեկ երրորդ փոքրամասնություն կազմելու նպատակով:

Հետևաբար, 2018թ. -ի դեկտեմբերի ընտրությունների արդյունքում վերագրվել էր ընդհանուր առմամբ 132 տեղ: Նոր խորհրդարանում գերակշռում է մեկ կուսակցություն՝ «Իմ քայլը» դաշինքը:

Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Այն ղեկավարվում է Վարչապետի կողմից, ով առաջադրում է Վարչապետի տեղակալների և բոլոր նախարարների պաշտոնների թեկնածուներին և որոշում կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունը: Վարչապետը ղեկավարում է նաև Անվտանգության խորհուրդը: Քաղաքական հակառակորդները կառավարման ներկայիս համակարգը բնութագրում են որպես «սուպերվարչապետական» և կոչ են անում սահմանափակել Վարչապետի լիազորությունները, մասնավորապես ուժեղացնել խորհրդարանական վերահսկողությունը Ազգային ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության նկատմամբ, որոնք այժմ ուղղակիորեն ենթակա են Վարչապետին:

Վարչապետի և կառավարության գործադիր լիազորությունների ուժեղացման արդյունքում նախագահի լիազորություններն, իրենց հերթին, կրճատվել են և դարձել են գրեթե արարողակարգային: Նախագահը, ով պետության ղեկավարն է, ընտրվում է խորհրդարանի կողմից յոթ տարի ժամկետով: Գործող նախագահը ընտրվել է 2018թ. -ի մարտին:

Ընդհանուր առմամբ, թեև առկա է զսպումների ու հակակշիռների մեխանիզմ, այն հարկավոր է էլ ավելի ամրապնդել: Միջազգային դիտորդական մարմինները ողջունում են Հայաստանի նոր իշխանությունների պատրաստակամությունը՝ հաստատելու ուժերի իրական հավասարակշռություն: [4]

Ընտրված պաշտոնատար անձանց՝ կառավարելու փաստացի լիազորություն

Ընտրված պաշտոնյաներն ունեն կառավարելու փաստացի իրավասություն: Քաղաքացիական իշխանությունները, ընդհանուր առմամբ, իրականացրել են արդյունավետ վերահսկողություն ռազմական և անվտանգության ուժերի նկատմամբ: Տարիներ շարունակ Հայաստանի քաղաքականությունը սերտորեն միահյուսված է եղել բիզնեսի հետ: 2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները ուղղված են եղել այս կապի փոփոխմանը, և դրանից հետո առաջընթաց է գրանցվել:

[2] *ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ Հայաստանի Հանրապետություն, արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 2018թ. դեկտեմբերի 9, Եզրափակիչ զեկույց, Վարշավա, 2019թ. մարտի 7, էջ. 1.*

[3] *Վենետիկի հանձնաժողով. Երկրորդ կարծիքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ (մասնավորապես՝ 8-րդ, 9-րդ, 11-ից մինչև 16-րդ գլուխները), որը Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատվել է 104-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 2015 թ. հոկտեմբերի 23-24-ը), Ստրասբուրգ, 2015 թվականի հոկտեմբերի 28):*

[4] *ԵԽԽՎ. ԵԽԽՎ դիտորդները ողջունում են բարեփոխումների մեկնարկը և կոչ են անում կոնկրետ արդյունքներ ի ցույց դնել, Մամլո հաղորդագրություն, Ստրասբուրգ, 2019թ. մարտի 25-ը:*

Հավելված 1 Քաղաքական գնահատական՝ 1-ին Հոդվածի համատեքստում

European Bank
for Reconstruction and Development

Քաղաքացիական հասարակություն, լրատվամիջոցներ և մասնակցություն

Քաղաքացիական հասարակության մասշտաբը և անկախությունը

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը բազմազան է և ակտիվ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մեծ դեր խաղացին 2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած իշխանափոխության ժամանակ և այդ ժամանակվանից ի վեր ակտիվ մասնակցություն են ունեցել ժողովրդավարական բարեփոխումների խթանման գործընթացում:

Պաշտոնական տվյալների համաձայն, 2017թ. -ի վերջի դրությամբ Հայաստանում գրանցված է եղել ավելի քան 6,000 քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ), չնայած հաշվարկվել է, որ գրանցված ՔՀԿ-ների միայն 20% -ն է ակտիվ: ՔՀԿ-ների իրավական և կարգավորող միջավայրը, որը նախկինում ընկալվում էր որպես գերկարգավորվող, սկսել է բարելավվել 2016թ.-ի դեկտեմբերին «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքի ընդունումից ի վեր: ՔՀԿ-ների կազմակերպչական կարողությունները և կայունությունը, ներառյալ ինստիտուցիոնալ զարգացումը, ֆինանսական կենսունակությունը և շահերի պաշտպանության հնարավորությունները, նույնպես ուժեղացել են: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ների համար տեղական ֆինանսավորման աղբյուրների հասանելիությունը դեռևս սահմանափակ է, հատկապես մարզերում, և ՔՀԿ-ները շարունակում են միջազգային դրամաշնորհներից մեծ կախվածություն ունենալ: ՔՀԿ-ները, զբաղվելով Հայաստանի հասարակության զգայուն հարցերով, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը և սեռական փոքրամասնությունների իրավունքները, երբեմն բացասական քարոզարշավների առարկա են դառնում՝ նրանց մեղադրում են դոնորների օրակարգերին հետևելու և հայկական ավանդական արժեքներին հակադրվելու մեջ:

Առանց գրաքննության գործող լրատվամիջոցների անկախությունը և բազմակարծությունը

Հայաստանում լրատվամիջոցների միջավայրը բազմազան է. գործում է ավելի քան 160 ավանդական լրատվամիջոց և ավելի քան 200 առցանց լրատվական պորտալ: Հեռուստատեսությունը քաղաքականության մասին տեղեկատվության առաջնային աղբյուրն է, հատկապես մայրաքաղաքից դուրս, մինչդեռ առցանց լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերը դառնում են ավելի ու ավելի կարևոր հարթակ քաղաքական տեղեկատվության և քննարկումների համար: Բայց քանի որ երկրում գովազդի շուկան սահմանափակ է, ինքնաֆինանսավորվող են միայն մի քանի լրատվամիջոց, մինչդեռ մեծ մասը կախված է արտաքին ֆինանսավորումից: Ենթադրվում է, որ երկրում բազմաթիվ մասնավոր լրատվամիջոցներ կապված են քաղաքական կուսակցությունների հետ, այդ թվում նաև ֆինանսապես: 2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսներին կառավարության փոփոխությունից հետո նոր իշխանությունները պարտավորվել են ամրապնդել լրատվամիջոցների ազատությունը:

Համարվում է, որ ԶԼՄ-ների բազմակարծությունն աճել է, չնայած կան նաև կարծիքներ, որ ընդհանուր «հետհեղափոխական» մթնոլորտը մարտահրավեր է առաջադրում անկախ քննադատական լրագրության համար և չի նպաստում կառավարության քննադատությանը:[5]

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով չի պահանջվում, որ բացահայտվի լրատվամիջոցների սեփականատերերի ամբողջական կառուցվածքը: Անհրաժեշտ են օրենսդրության հետագա լրամշակումներ ապահովելու լրատվամիջոցների թափանցիկությունն ու բազմակարծությունը:[6]

Քաղաքացիական և քաղաքական մասնակցության բազմաթիվ ուղիներ

Չնայած բազմաթիվ պաշտոնական ուղիների առկայությանը, քաղաքացիների մասնակցությունը քաղաքական գործընթացին հիմնականում ցածր է եղել, մասամբ քաղաքական և ընտրական գործընթացների նկատմամբ ընդհանուր անվստահության պատճառով: 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո կառավարության նկատմամբ հասարակության վստահությունն աճել է՝ ստեղծելով ավելի ամուր հիմք քաղաքացիական և քաղաքական մասնակցության համար:

Քաղաքական կուսակցություններ կազմելու ազատություն և կազմակերպված ընդդիմության առկայություն

Հայաստանն ունի բազմակուսակցական համակարգ: Քաղաքական կուսակցությունների գաղափարական բազմակարծությունը և ազատ գործելու ազատությունը երաշխավորված են Սահմանադրությամբ և կիրառվում են գործնականում: Համարվում է, որ քաղաքական բազմակարծությունն ընդլայնվել է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած փոփոխություններից հետո: 2018 թվականի դեկտեմբերի խորհրդարանական ընտրություններում միմյանց հետ մրցել են 11 քաղաքական կուսակցություններ և դաշինքներ: Դրանցից երեքը հաղթահարեցին ընտրական շեմը (5% քաղաքական կուսակցությունների և 7% դաշինքների համար) և մտան խորհրդարան: Ընդդիմադիր կուսակցությունները ի վիճակի են ազատորեն քարոզարշավներ անցկացնել և ընդդիմանալ կառավարության նախաձեռնություններին: Սակայն ներկայիս խորհրդարանում կառավարող կուսակցության գերակշռությունը և ընդդիմության թուլությունը վերջինիս համար դժվարացնում են որպես կենսունակ քաղաքական այլընտրանք ծառայելու գործառույթը:

[5] *ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸՌԱ՝ Հայաստանի Հանրապետություն, Արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 2018 թվականի դեկտեմբերի 9, Եզրափակիչ զեկույց, Վարշավա, 2019 թվականի մարտի 7, էջ 14-15:*

[6] *Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ. Մամլո հաղորդագրություն, 2018 թ. հոկտեմբերի 25, Մամլո համատեղ հայտարարություն՝ ԵՄ-ն և Հայաստանը անցկացնում են Մարդու իրավունքների վերաբերյալ 10-րդ երկխոսությունը, Բրյուսել, 2019 թվականի ապրիլի 8:*

Հավելված 1 Քաղաքական գնահատական՝ 1-ին Հոդվածի համատեքստում

European Bank
for Reconstruction and Development

Օրենքի գերակայություն և արդարադատության հասանելիություն

Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայությունը ամրագրված է Հայաստանի Սահմանադրությամբ, և գործում են անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ երաշխիքները: Արդար դատավարության իրավունքը նույնպես նախատեսված է Սահմանադրությամբ, սակայն դատական համակարգի նկատմամբ հասարակության ցածր վստահությունը խարխլում է այդ իրավունքը:

Դատական համակարգի անկախություն

ՀՀ Սահմանադրությունն արգելում է ցանկացած միջամտություն արդարադատության իրականացման գործընթացին այն պիտի իրականացվի միայն դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: 2018-ի փետրվարին ընդունվեց նոր Դատական օրենսգիրք, որն ուղղված էր դատավորների անկախության ամրապնդմանը և ընդհանուր առմամբ դրական գնահատականի էր արժանացել Վենետիկի հանձնաժողովի կողմից: Սակայն, չնայած օրենքը նախատեսում էր անկախ դատական համակարգ, ընդհանուր առմամբ դատական համակարգը չէր ընկալվում որպես անկախ և անաչառ, և հասարակության անվստահությունը համակարգի բարեվարքության նկատմամբ պահպանվում էր: [7]

2018թ. -ի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո նոր իշխանությունները պարտավորվել են իրականացնել լայնածավալ բարեփոխումներ արդարադատության ոլորտում՝ դատական համակարգի անկախության ամրապնդման նպատակով: Մշակվում է 2019-2024 թվականների համար Արդարադատության ոլորտում բարեփոխումների նոր ռազմավարություն և դրա գործողությունների պլանը: Միջազգային դիտորդական մարմինները ողջունում են նախապատրաստվող բարեփոխումները և առաջարկել են իրենց աջակցությունը դատական համակարգի բարեփոխումների նախագծման և իրականացման գործընթացում՝ Հայաստանի Սահմանադրության համաձայն և հաշվի առնելով համապատասխան միջազգային չափանիշները: Բայց քանի որ բարեփոխումը դեռ ընթացքի մեջ է, համակարգի նկատմամբ հասարակության անվստահությունը շարունակում է մնալ բարձր: [8]

Կառավարությունն ու քաղաքացիները հավասարապես ենթարկվում են օրենքին

Սահմանադրությունը երաշխավորում է բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև:

Այս սկզբունքն, այնուամենայնիվ, գործնականում միշտ չէ, որ ապահովված է եղել, մանավանդ, որ շատ քիչ դեպքեր են եղել, երբ պաշտոնյաները հետապնդվել են կոռուպցիայի և այլ իրավախախտումների համար: Անպատժելիությունը ընկալվում էր որպես տարածված երևույթ:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած՝ կառավարության փոփոխությունից հետո, Հայաստանի նոր իշխանությունները հավատարիմ մնացին օրենքի առջև հավասարության սկզբունքին: Քայլեր են ձեռնարկվել իրավապահների հաշվետվողականության կատարելագործման ուղղությամբ, և ոչ մի խմբավորում կամ անհատ չի կարող իրեն պաշտպանված զգալ իրավական մեխանիզմի աշխատանքից: ՀՀ քաղաքացիները, ընդհանուր առմամբ, զգում են, որ օրենքի առջև այմ ավելի հավասար են:

Կոռուպցիան կանխարգելելու համար արդյունավետ քաղաքականություններ և ինստիտուտներ

Հայաստանը նախորդ ռազմավարության ժամանակաշրջանում շարունակում էր բարեփոխել իր հակակոռուպցիոն օրենսդրությունը և ինստիտուտները: Այնուամենայնիվ, բացակայում էր համատարած կոռուպցիայի դեմ պայքարի իրական վճռականություն, իսկ գործնականում հակակոռուպցիոն օրենքների հարկադիր կատարման բացակայությունը, մենաշնորհային տնտեսության հետ միասին, շարունակում էին լուրջ մտահոգություն առաջացնել: [9]

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո նոր իշխանությունները կոռուպցիայի դեմ պայքարը դասեցին որպես քաղաքականության հիմնական առաջնահերթություններից մեկը: Դրսևորվել է ուժեղ քաղաքական կամք և ձեռնարկվել են վճռական քայլեր կոռուպցիան արմատախիլ անելու և օրենքի գերակայությունը ամրապնդելու ուղղությամբ: Մի շարք աղմկահարույց գործերով մեղադրանքներ են ներկայացվել և ձերբակալություններ իրականացվել, և գրանցվել են առաջին շոշափելի արդյունքները: Կոռուպցիան երկարաժամկետ կտրվածքով արմատախիլ անելու համար անհրաժեշտ է ստեղծել ավելի ուժեղ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքեր, որոնք կհամալրեն ուժեղ քաղաքական կամքը: Մշակվում է 2019-2022 թվականների համար նոր հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա ներքո գործողությունների ծրագիրը: Ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով նախատեսվում է հիմնել Հակակոռուպցիոն իրավապահ մարմին՝ հակակոռուպցիոն հանձնաժողով, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով և կոռուպցիոն գործերով զբաղվող դատարան: [10]

«Թրանսփարենսի ինթերնեշնլ»-ը «Կոռուպցիայի ընկալման ցուցիչ 2018»-ի վարկանիշային աղյուսակում Հայաստանը 180 երկրների շարքում դասել է 105-րդ տեղում՝ սա փոքր բարելավում է նախորդ տարվա համեմատ:

[7] *Եվրոպական հանձնաժողով (ԵՀ) և Եվրոպական միության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր Ներկայացուցիչ (ԲՆ). Զեկույց ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ Եվրոպական հարևանության (ԵՀՔ) վերանայված քաղաքականության շրջանակներում, Բրյուսել, 2018 թվականի հունիսի 4, էջ 7-8:*

[8] *ԵՀ և ԲՆ. Գործընկերության իրականացման զեկույցը Հայաստանի վերաբերյալ, Աշխատակազմի համատեղ աշխատանքային փաստաթուղթ, Բրյուսել, 2019 թվականի մայիսի 20, էջ 7-8, ԵԽԽՎ Հայաստան. ԵԽԽՎ դիտորդները անհանգստություն են հայտնում Վարչապետի դատարանները արգելափակելու կոչի կապակցությամբ, Մամլո հաղորդագրություն, 2019թ. մայիսի 21-ը:*

[9] *Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ). Հակակոռուպցիոն բարեփոխումներ Հայաստանում, Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիտորինգի չորրորդ փուլ, 2018 թ. հուլիսի 4-ը:*

[10] *ԵՀ և ԲՆ. Գործընկերության իրականացման զեկույցը Հայաստանի վերաբերյալ, 2019թ. մայիսի 20-ը, էջ 8:*

Հավելված 1 Քաղաքական գնահատական՝ 1-ին Հոդվածի համատեքստում

European Bank
for Reconstruction and Development

Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

Խոսքի, տեղեկատվության, կրոնի, խղճի, տեղափոխության, միավորումների, հավաքների և մասնավոր սեփականության ազատություն

Հայաստանը հավատարիմ է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանմանը՝ իր ազգային օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան՝ որպես ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի Խորհրդի անդամ:

Նախորդ վարչակազմի օրոք, ընդհանուր առմամբ հարգված էին քաղաքացիական և քաղաքական հիմնական իրավունքները, սակայն գործնականում դրանք հետևողականորեն չէին պահպանվում: Մասնավորապես հավաքների ազատության պահպանումը սելեկտիվ էր, և եղել են ոստիկանության կողմից խաղաղ ցուցարարների նկատմամբ ուժի անհամաչափ կիրառման, նախնական կալանքի չափազանց կիրառման և օրենսդրության կամայական մեկնաբանման դեպքեր՝ ընդդիմության ակտիվիստներին պատժելու համար:[11]

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած՝ կառավարության փոփոխությունից հետո համապատասխան միջազգային կազմակերպությունները բարձր են գնահատել դրական փոփոխությունները՝ երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքի և պաշտպանության առումով: Հայաստանը զգալիորեն բարելավել է իր միջազգային ցուցանիշները: Միավորումների, հավաքների, արտահայտման և տեղափոխման ազատությունների նկատմամբ ամրապնդված հարգանքը ապացուցվեց 2018 թվականի դեկտեմբերին կայացած խորհրդարանական վերջին քարոզարշավի ընթացքում: Մարդու իրավունքների 2017-2019 թվականների գործողությունների ազգային Ծրագրի իրականացումը շարունակվում է, սակայն Ծրագիրը չունի մոնիտորինգի, գնահատման և համակարգման հստակ մեխանիզմներ:[12] 2019 թվականին նախատեսվում է ընդունել 2020-2022 թվականների համար Մարդու իրավունքների նոր ռազմավարությունը և գործողությունների նոր ծրագիրը:

ԵԽ-ի՝ Մարդու իրավունքների Հանձնակատարը ողջունել է նաև նոր կառավարության կողմից տրված նոր ազդակը՝ վերջնականապես ճշմարտություն հաստատելու և քրեական պատասխանատվության ենթարկելու նրանց, ովքեր պատասխանատու են նախագահական ընտրություններից հետո 2008թ. -ի մարտին տեղի ունեցած՝ բռնի իրադարձությունների ընթացքում 10 մարդու մահվան համար: Միևնույն ժամանակ, Հանձնակատարը շեշտել է, որ կարևոր է ապահովել, որ այս գործընթացն իրականացվի՝ խստորեն պահպանելով օրենքի գերակայության, դատական անկախության, թափանցիկության և արդար դատաքննության երաշխիքները:[13]

Քաղաքական ներառականություն կանանց, ինչպես նաև էթնիկական և այլ փոքրամասնությունների համար

ՀՀ նոր Սահմանադրությամբ սահմանվում է, որ բոլոր հիմքերով խտրականությունն արգելված է: Վերջին տարիների օրենսդրական և այլ փոփոխությունները, այդ թվում՝ «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և ընտանեկան համախմբվածության վերականգնման մասին» օրենքի ընդունումը (2017թ. դեկտեմբեր), Վարչապետի կողմից Ընտանեկան բռնության կանխարգելման խորհրդի ստեղծումը (2018թ. հուլիսին) և «Հավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի նախապատրաստումը էլ ավելի են խստացրել այդ արգելքը:

Այնուամենայնիվ, գենդերային հավասարությունը, ընտանեկան բռնությունը և ԼԳԲՏԻ անձանց իրավունքները, որոնք զգայուն թեմաներ են հայ հասարակության համար, շարունակում են լուրջ խնդիր մնալ:

Դրական միտումներ են նկատվել կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու առումով. վերջին տասնամյակում աճել է կանանց համամասնությունը պատգամավորների շրջանում (կուսակցությունների ցուցակներում կին թեկնածուների քվոտայի ներդրումից հետո), և ներկայիս խորհրդարանում հասնում է 24%-ի (եվրոպական միջինը կազմում է 25,6%); առաջին կին քաղաքապետն ընտրվեց 2018-ի օգոստոսին, և 2018 թվականի սեպտեմբերի ընտրությունների արդյունքում կանայք կազմում են Երևանի ավագանու անդամների 31%-ը: Այնուամենայնիվ, կանայք դեռ բավարար չափով ներկայացված չեն քաղաքականության և հանրային որոշումների կայացման ոլորտներում: Միջազգային դիտորդների կարծիքով, վերջին խորհրդարանական ընտրություններում որոշ թեկնածուներ՝ կանայք, «իրենց սեռի պատճառով անհարգալից հռետորաբանության թիրախ էին դարձել»:[14] Գործադիր իշխանությունում կանանց ներգրավվածության ծավալը նույնիսկ ավելի սահմանափակ է. գործող կառավարության 15 անդամներից միայն մեկն է կին, և 10 մարզպետներից՝ ոչ մեկը:

Չնայած վերջին տարիների ողջունելի զարգացումներին և ջանքերին, Հայաստանում ընտանեկան բռնությունը շարունակում է մնալ «լուրջ, տարածված և որոշ չափով դեռևս թերագնահատված երևույթ»: Հետևաբար, համապատասխան միջազգային մարմինները երկրին առաջարկում են վավերացնել ԵԽ-ի՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան (ստամբուլյան կոնվենցիա), միաժամանակ ապահովելով,

[11] ԵՀ և ԲՆ. Զեկույց ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ՝ Եվրոպական հարևանության (ԵՀՔ) վերանայված քաղաքականության շրջանակներում, 2018 թվականի հունիսի 4, էջ. 4:

[12] ԵՀ և ԲՆ. Գործընկերության իրականացման զեկույց Հայաստանի վերաբերյալ, 2019 թվականի մայիսի 20-ը, էջ 3:

[13] ԵԽ Մարդու իրավունքների Հանձնակատար. Զեկույց 2018 թվականի սեպտեմբերի 16-ից 20-ը Հայաստան կատարված այցի մասին, Ստրասբուրգ, 2019 թվականի հունվարի 29, էջ 2:

[14] ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸՌՄ՝ Հայաստանի Հանրապետություն, Արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 2018 թվականի դեկտեմբերի 9, Եզրափակիչ զեկույց, Վարշավա, 2019 թվականի մարտի 7, էջ 2:

որ նոր ազգային օրենսդրությունը գործնականում արդյունավետ կերպով կկիրառվի:[15]

ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ խտրականության մի քանի դեպք (այդ թվում նաև ատելության խոսք և բռնության սպառնալիքներ) միջազգային մտահոգության տեղիք են տվել:[16] ԵԽ Մարդու իրավունքների Հանձնակատարը խորհուրդ է տվել, որ Հայաստանի իշխանությունները ընդունեն խտրականության դեմ համապարփակ օրենք, որը կպարունակի հստակ հղում սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանը, և կոչ է արել իշխանություններին անհապաղ և վճռական գործողություններ ձեռնարկել բռնության, ատելության խոսքերի և ատելության հիմքով հանցագործությունների բոլոր դեպքերի դեմ, որոնք թիրախավորում են երկրում ԼԳԲՏԻ անձանց:[17]

Հայաստանի ժամանակակից հասարակությունը հիմնականում էթնիկորեն միատարր է: Օրենքի համաձայն, խորհրդարանում մինչև չորս տեղ վերապահված է չորս ամենամեծ ազգային փոքրամասնություններին:

Ազատություն ոտնձգությունից, ահաբեկումից և խոշտանգումներից

ՀՀ Սահմանադրությունը հստակ արգելում է խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը:

Քաղաքացիական օրենսգիրքը, որը լրամշակվել է 2015թ. -ի դեկտեմբերին և 2016թ. -ի դեկտեմբերին, նախատեսում է հետագա երաշխիքներ, այդ թվում՝ նյութական փոխհատուցման իրավունք տալով այն անձանց, ում՝ խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատ լինելու իրավունքը խախտվել է: 2017 թվականին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» նոր օրենքը ամրապնդեց պաշտպանի դերը՝ որպես խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմ:

Չնայած օրենսդրական այս բարելավումներին, շարունակում են մնալ մտավախություններ վատ վերաբերմունքի և խոշտանգումների գործելակերպի վերաբերյալ, մասնավորապես ոստիկանական բաժանմունքներում:[18] Ընթացքի մեջ է հատուկ օրենսդրական երաշխիքների հետագա մշակումը (օրինակ՝ Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով):

Հայաստանի վերաբերյալ ԵՄ Գործընկերության Իրականացման վերջին զեկույցը կոչ է անում մանրամասնորեն հետաքննել 2019-ի հունվարին անազատության մեջ գտնվող դատապարտյալի մահը, որը տեղի է ունեցել հացադուլից հետո:[19] Խորհուրդ է տրվում, որ Հայաստանի նոր իշխանությունները սերտորեն համագործակցեն Խոշտանգումների և անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման եվրոպական հանձնաժողովի հետ, ինչպես նաև զարգացնեն ՀՀ Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունները:[20]

[15] *ԵԽ Մարդու իրավունքների Հանձնակատար. Զեկույց 2018 թվականի սեպտեմբերի 16-ից 20-ը Հայաստան կատարված այցի մասին, Ստրասբուրգ, 2019 թվականի հունվարի 29, էջ 1,3,-13: Տե՛ս նաև ԵԽԽՎ-ի դիտորդները ողջունում են բարեփոխումների մեկնարկը և կոչ են անում ի ցույց դնել շոշափելի արդյունքներ, Մամլո հաղորդագրություն, 2019թ. մարտի 25-ը: ԵՀ և ԲՆ. Գործընկերության իրականացման զեկույց Հայաստանի վերաբերյալ, 2019թ. մայիսի 20, էջ 5:*

[16] *EC&HR: ԵՀ և ՄԻ. Գործընկերության իրականացման զեկույց Հայաստանի վերաբերյալ, 2019թ. մայիսի 20, էջ 4-5: Տե՛ս նաև Հայտարարություն Եվրոպական միության պատվիրակության անունից և Հայաստանում ԵՄ անդամ պետությունների ռեզիդենտ դեսպանությունների անունից, 2019 թվականի ապրիլի 9-ին: Նմանատիպ հայտարարություն է տարածվել նաև ՄԱԳ-ի երևանյան գրասենյակի կողմից:*

[17] *ԵԽ Մարդու իրավունքների Հանձնակատար. Զեկույց 2018 թվականի սեպտեմբերի 16-ից 20-ը Հայաստան կատարված այցի մասին, Ստրասբուրգ, 2019 թվականի հունվարի 29, էջ 2, 24-27: Տե՛ս նաև ԵԽԽՎ-ի դիտորդները ողջունում են բարեփոխումների մեկնարկը և կոչ են անում ի ցույց դնել շոշափելի արդյունքներ, Մամլո հաղորդագրություն, 2019թ. մարտի 25-ը:*

[18] *Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ). Հաշվետվություն Հայաստանի կառավարությանը 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ, Ստրասբուրգ, 2016 թվականի նոյեմբերի 22:*

[19] *ԵՀ և ՄԻ. Գործընկերության իրականացման զեկույց Հայաստանի վերաբերյալ, 2019թ. մայիսի 20, էջ 4:*

[20] *Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն (ԱԳԵԾ). Համատեղ մամլո հաղորդագրություն ԵՄ-ն և Հայաստանը անցկացնում են Մարդու իրավունքների վերաբերյալ 10-րդ երկխոսությունը, Բրյուսել, 2019 թվականի ապրիլի 8:*